Հաստատված է
«Հայաստանի պետական տնտեսագիտական
համալսարան» պետական ոչ առևտրային
կազմակերպության գիտական խորհրդի
2023 թվականի հոկտեմբերի 31-ի N 3 - 8 որոշմամբ

ԿԱՐԳ
ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ, ԳԻՏԵԼԻՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը մշակվել է «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերի և «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ներքին իրավական ակտերի հիման վրա:

2. Սույն կարգի նպատակն է առկա ուսուցմամբ մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնառության և գիտելիքի ստուգման գործընթացներում ուսանող-համալսարան հարաբերությունների կարգավորումը և ուսանողների գիտելիքի ստուգման գնահատման մեխանիզմների միասնական համակարգի սահմանումը:

3. Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում (այսուհետ՝ համալսարան) մագիստրոսի կրթական ծրագրերն իրականացվում են կրեդիտային համակարգով:

4. Ուսանողին համապատասխան որակավորման աստիճանը շնորհվում է կրթական ծրագրով սահմանված անհրաժեշտ բաղադրիչների և դրանց համար սահմանված կրեդիտների ամբողջական ծավալի ձեռքբերումից հետո:

5. Առկա ուսուցմամբ մագիստրոսի կրթական ծրագրերը կարող են իրականացվել 2, 3 կամ 4 կիսամյակներով, համապատասխանաբար 1, 1,5 և 2 տարի ուսուցման տևողությամբ: Կրթական ծրագրերի ուսուցման տևողությունը սահմանում են դրանք մշակողները՝ կախված առաջարկվող ծրագրերի բովանդակային առանձնահատկություններից և կառուցվածքից:

6. 1, 1,5 և 2 տարի ուսուցման տևողությամբ կրթական ծրագրերի ուսումնական աշխատածավալները համապատասխանաբար կազմում են 60, 90 և 120 ԿՓԵՀ (ECTS) կրեդիտ:

7. Ուսանողի ուսումնական լրիվ բեռնվածությունը մեկ ուսումնական տարում 60 ԿՓԵՀ կրեդիտ է, մեկ կիսամյակում՝ 27-33 կրեդիտ (հանրագումարում՝ տարեկան 60 կրեդիտի պայմանով):

8. Մագիստրոսի կրթական ծրագրերը, համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ, կարող են իրականացվել նաև մոդուլային սկզբունքով, համաձայն որի՝ կիսամյակում ընդգրկված դասընթացները կամ մոդուլները կազմակերպվում են կրթական ծրագրում որոշված հաջորդականությամբ և ժամանակահատվածներում:

1) Մոդուլային սկզբունքով իրականացվող մասնագիտական կրթական ծրագրերում (այսուհետ՝ ՄԿԾ) միաժամանակ կարող են կազմակերպվել 1-3 դասընթաց:

2) Յուրաքանչյուր մոդուլում ներառված դասընթացների ավարտից հետո, ելնելով կրթական ծրագրի պահանջներից, կարող են կազմակերպվել փորձառություններ կամ արտալսարանային տարբեր գործառույթներ, որոնք կապահովեն տվյալ մոդուլի ամբողջականությունը:

3) Որպես մոդուլ կարող է լինել նաև փորձառությունը:

4) Դասընթացում նախատեսվող փորձառություններին կրեդիտային բեռնվածություն չի հատկացվում. դրանք որպես բաղադրիչ ներառվում են դասընթացների կրեդիտային բեռնվածության մեջ:

5) Որպես մոդուլ հանդիսացող փորձառություններին հատկացվում են առանձին կրեդիտներ:

6) Բոլոր տեսակի փորձառությունների կրեդիտային բեռնվածությունը հստակեցվում է ՄԿԾ-երով՝ պահպանելով փորձառություններին հատկացվող կրեդիտների հանրագումարը:

9. Մոդուլի ավարտից հետո, մեկ շաբաթվա ընթացքում, կազմակերպվում են դրանում ներառված դասընթացների քննությունները:

10. Մեկ ԿՓԵՀ կրեդիտը համարժեք է 30-ժամյա ուսումնական բեռնվածությանը (ներառյալ՝ ուսանողի լսարանային, արտալսարանային և ինքնուրույն աշխատանքը):

11. Ուսանողի շաբաթական ուսումնական լրիվ բեռնվածության առավելագույն չափը 45 ժամ է (ներառյալ՝ ինքնուրույն արտալսարանային աշխատանքը), որը համարժեք է 1,5 կրեդիտի:

12. Մագիստրատուրայում ուսանողի աշխատածավալն ընդգրկում է դասախոսություններին, գործնական և լաբորատոր պարապմունքներին ու փորձառություններին մասնակցությունը, քննությունների հանձնումը, անհատական կամ խմբային գիտահետազոտական աշխատանքը, մագիստրոսական թեզի կատարումը և հրապարակային պաշտպանությունը, ինչպես նաև ուսումնական պլանով նախատեսված այլ աշխատանքներ:

1) Մոդուլային սկզբունքով իրականացվող ՄԿԾ-երում ուսանողի աշխատածավալն ընդգրկում է նաև առանձին դասընթացների փորձառություններին մասնակցությունը, եթե այդպիսի դասընթացներ նախատեսվել են ՄԿԾ-ով:

13. Մագիստրոսի կրթական ծրագրում ուսանողի շաբաթական լսարանային բեռնվածությունը կարող է կազմել 15-18 ժամ, իսկ մոդուլային սկզբունքով իրականացվող ՄԿԾ-երում՝ 15-22 ժամ:

14. Մագիստրոսի կրթական ծրագիրը, որպես կանոն, բաղկացած է ընդհանրական, մասնագիտական, ընտրովի և գիտահետազոտական կրթաբլոկներից (հավելված N 7):

15. Մագիստրոսի կրթական ծրագրերում յուրաքանչյուր դասընթաց ներառվում է մեկ կիսամյակի շրջանակներում՝ առավելագույնը 48 լսարանային ժամ ծավալով: Մոդուլային սկզբունքով իրականացվող ՄԿԾ-երում յուրաքանչյուր դասընթաց ներառվում է ընդամենը մեկ մոդուլի կրթացիկլում, որի սկիզբը և ավարտը կարգավորվում է մոդուլի ցիկլի տևողությամբ:

16. Կրթական ծրագրի բոլոր բաղադրիչների համար սահմանվում են կրեդիտներ, որոնք արտահայտում են ուսանողին ներկայացվող լսարանային, արտալսարանային և ինքնուրույն աշխատանքի ուսումնական լրիվ բեռնվածությունը: Կրեդիտների սահմանման հիմքը կրթական ծրագրի որևէ բաղադրիչի յուրացման բարդությունն է (ուսանողի կողմից դրա յուրացման համար անհրաժեշտ ժամանակի տևողությունը):

17. Ուսանողը վաստակում է սահմանված կրեդիտը կրթական ծրագրի համապատասխան բաղադրիչի վերջնարդյունքները հաջողությամբ յուրացնելու և գնահատականի դրական շեմ ապահովելու դեպքում:

18. Կիսամյակը, կրթական ցիկլը (մուդուլային սկզբունքով իրականացվող ՄԿԾ-երում), ուսումնական տարին կամ ուսումնառության լրիվ ծրագիրը հաջողությամբ ավարտելու համար ուսանողը պետք է վաստակի կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ քանակը:

19. 2 տարի ուսուցման տևողությամբ կրթական ծրագրերի ընթացիկ ակադեմիական անբավարար առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին (բացառությամբ պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքով ընդունվածների) իրավունք է վերապահվում մինչև 1-ին կուրսի 2-րդ

կիսամյակի քննաշրջանի ավարտը լրացնել առավելագույնը 12 կրեդիտ կազմող ակադեմիական պարտքերը (բուհի կողմից սահմանված կարգով և ժամկետներում)՝ ևս երկու անգամ վերահանձնելով համապատասխան առարկայական դասընթացների քննությունները և ստուգարքները, որոնց ցանկը հաստատում է բուհը՝ հաշվի առնելով առարկաների շարունակականության սկզբունքը, ըստ ուսումնական պլանի:

20. Առավելագույնը 12 կրեդիտ կազմող ակադեմիական պարտք (պարտքեր) վերահանձնելու հնարավորություն (հնարավորություններ) է (են) տրվում այն կիսամյակի քննաշրջանի ավարտից հետո, երբ առաջացել է (են) այդ պարտքը (պարտքերը), բայց ոչ ուշ, քան այն կիսամյակի սկիզբը, որում ներառված է ակադեմիական պարտք մնացած դասընթացի շարունակություն հանդիսացող որևէ դասընթաց:

21. Առավելագույնը 12 կրեդիտ կազմող ակադեմիական պարտքի (պարտքերի) վերահանձնելու ժամկետները հաստատվում են յուրաքանչյուր ուսումնական տարի՝ ուսումնական գործընթացի ժամանակացույցի հետ միասին, իսկ որոշակի դասընթացների վերահանձնման վերջնաժամկետները (ըստ կիսամյակների) հաստատվում են ֆակուլտետների գիտական խորհուրդների կողմից և հրապարակվում են համալսարանի պաշտոնական կայքում՝ ուսանողների համար նախատեսված բաժնում:

22. Համալսարանում ուսանողի գիտելիքի գնահատումն իրականացվում է բազմագործոնային համակարգով:

23. Մագիստրոսի կրթական ծրագրերի շրջանակներում ուսանողների գիտելիքը գնահատվում է ըստ առանձին բաղադրիչների՝ դասընթացներ կամ մոդուլներ, փորձառություն և մագիստրոսական թեզ:

24. Կրթական ծրագրի առարկայական դասընթացների և փորձառության գնահատումը կատարվում է դրանց անհատական ծրագրերով սահմանված գնահատման տարբեր գործոնների և կշիռների հիման վրա (հավելված N 5.1):

25. Գնահատումն իրականացվում է 20 միավորային համակարգով: 20 միավորային համակարգը նախկինում կիրառված գնահատման 5 և 100 միավորային համակարգերին համապատասխանեցնելու համար ուղեցույց է ծառայում N 4 հավելվածը:

26. Այլ բուհերից համալսարան տեղափոխվող ուսանողների պարագայում նրանց ակադեմիական տեղեկագրում նշված և համալսարանի կողմից փոխճանաչված դասընթացների գնահատականները (5, 10, 100 կամ այլ միավորային համակարգով գնահատված) արտածվում են ուսանողի ակադեմիական տեղեկագրում արտացոլված գնահատականի՝ գնահատման սանդղակի առավելագույն շեմում ունեցած տեսակարար կշռով (հարյուրերորդականի ճշգրտությամբ):

27. Ուսումնական կիսամյակը բաղկացած է 20 շաբաթից, որը ներառում է տեսական ուսուցումը, գիտելիքի ստուգումն ու գնահատումը (կիսամյակային քննաշրջանը):

1) 2 տարի ուսուցման տևողությամբ կրթական ծրագրերում ուսումնառության 4-րդ կիսամյակը ներառում է գիտահետազոտական փորձառությունը (ներառյալ՝ դրա պաշտպանությունը) և մագիստրոսական թեզի պաշտպանությունը:

2) 1,5 տարի ուսուցման տևողությամբ ոչ մոդուլային սկզբունքով կառուցված կրթական ծրագրերում ուսումնառության 3-րդ կիսամյակը ներառում է գիտահետազոտական փորձառությունը, դրա պաշտպանությունը և մագիստրոսական թեզի պաշտպանությունը:

3) 1,5 տարի ուսուցման տևողությամբ մոդուլային սկզբունքով կառուցված կրթական ծրագրերում ուսումնառության 3-րդ կիսամյակում, բացի գիտահետազոտական փորձառությունից (և դրա պաշտպանությունից) և մագիստրոսական թեզի պաշտպանությունից, կարող են ներառված լինել նաև տեսական ուսուցման մոդուլներ:

4) 1 տարի ուսուցման տևողությամբ մոդուլային սկզբունքով կառուցված կրթական ծրագրերում ուսումնառության 2-րդ կիսամյակում, բացի գիտահետազոտական փորձառությունից (և դրա պաշտպանությունից) և մագիստրոսական թեզի պաշտպանությունից, կարող են ներառված լինել նաև տեսական ուսուցման մոդուլներ:

28. Ուսումնական կիսամյակի 1-16-րդ շաբաթների ընթացքում ուսումնական գործընթացին զուգահեռ, հաճախումների հաշվառման, ուսանողի ընթացիկ ակտիվության և ուսանողների գիտահետազոտական կամ խմբային աշխատանքի (եթե նախատեսված է դասընթացի ծրագրով), գիտամանկավարժական, մոդուլային կամ առարկայական փորձառությունների (եթե նախատեսված են ուսումնական և (կամ) դասընթացների ծրագրերով) հիման վրա կատարվում է գիտելիքի ստուգման և գնահատման գործընթաց: Ուսումնական կիսամյակի վերջին չորս (17-20-րդ) շաբաթների ընթացքում կազմակերպվում է քննաշրջան (ներառյալ՝ ստուգարքների հանձնումը):

29. Մոդուլային սկզբունքով կազմակերպվող կրթական ծրագրերում քննությունները կարող են կազմակերպվել կիսամյակի ընթացքում յուրաքանչյուր մոդուլի ավարտից հետո՝ պահպանելով կիսամյակի 20 շաբաթ ընդհանուր տևողությունը:

30. Միևնույն խմբում նույն օրը գիտելիքի 2 քննական ստուգում չի թույլատրվում:

31. Հարգելի պատճառով չներկայացած ուսանողների վերահանձնման, 1-ին և 2-րդ վերահանձնումների, չներկայացած ուսանողների վերահանձնման և առավելագույնը 12 կրեդիտ կազմող ակադեմիական պարտքերի 1-ին և 2-րդ վերահանձնումների փուլում նույն օրը թույլատրվում է կազմակերպել 1-ից ավելի դասընթացներից գիտելիքի քննությամբ ավարտվող ստուգումներ (ներառյալ՝ համակարգչային քննությամբ ավարտվող):

32. Քննաշրջանի արդյունքներով ձևավորվում է ուսանողի գիտելիքի վերջնական հաշվարկային գնահատականը և դրական շեմը չհաղթահարած ուսանողների համար կազմակերպվում է 2 վերահանձնում:

33. Սույն կարգով չկանոնակարգված մագիստրոսի կրթական ծրագրերի ընթացիկ կազմակերպական գործառույթները կարող են կանոնակարգվել գիտական խորհրդին կից ուսումնամեթոդական հանձնաժողովի եզրակացության հիման վրա՝ համալսարանի ռեկտորատի և գիտական խորհրդի կողմից ընդունված առանձին որոշումներով:

2. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

34. Համալսարանի ուսանողներն իրավունք ունեն.

1) մասնակցելու իրենց կրթության բովանդակության ձևավորմանը (ուսումնական դասընթացների, մագիստրոսական թեզի թեմայի ընտրությանը)՝ պահպանելով որակավորումների ազգային շրջանակի և որակավորումների ոլորտային շրջանակի պահանջները,

2) տեղեկացված լինելու գիտելիքի ստուգման և գնահատականի ձևավորման սկզբունքներին, կանոններին և կառուցակարգերին,

3) ստանալու տեղեկատվություն վերջնական հաշվարկային գնահատականի մասին,

4) ստանալու տեղեկատվություն վերահանձնման թույլատրված ուսանողների մասին,

5) մասնակցելու համալսարանի կառավարմանը՝ օրենքով կամ համալսարանի կանոնադրությամբ սահմանված դեպքերում և կարգով,

6) մասնակցելու կրթական ծրագրի յուրաքանչյուր բաղադրիչի որակի և ակադեմիական կազմի գնահատմանը՝ համալսարանում գործող կարգին համապատասխան,

7) անվճար օգտվելու համալսարանի գրադարանից, ընթերցասրահներից, լաբորատորիաներից, տեղեկատվական շտեմարաններից, ուսումնական, գիտական, բուժական և այլ ստորաբաժանումների ծառայություններից,

8) մասնակցելու գիտահետազոտական աշխատանքներին, գիտաժողովներին և սեմինարներին,

9) բողոքարկելու ուսումնական գործընթացին վերաբերող համալսարանի ղեկավարության հրամաններն ու կարգադրությունները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,

10) բողոքարկելու կրթական ծրագրի տարբեր բաղադրիչներից ստացած գնահատականները,

11) Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ և համալսարանի կանոնադրությամբ սահմանված կարգով ստանալու սահմանված չափի՝ իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից նշանակված կրթաթոշակ (ներառյալ՝ անվանական), ինչպես նաև դրամաշնորհ,

12) ծանոթանալու համալսարանի կանոնադրությանը և այլ նորմատիվ փաստաթղթերին,

13) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում ստանալու ակադեմիական արձակուրդ՝ մինչև մեկ տարի ժամկետով,

14) դադարեցնելու ուսումը և զորակոչվելու պարտադիր ժամկետային զինվորական ծառայության, իսկ զորացրվելուց հետո ձմեռային զորակոչի դեպքում՝ երկու ամսվա ընթացքում և ամառային զորակոչի դեպքում՝ երեք ամսվա ընթացքում ներկայացնելու դիմում ուսանողական իրավունքները վերականգնելու համար,

15) ուսումնական տարվա ընթացքում առնվազն 2 անգամ գտնվելու արձակուրդում՝ 8 շաբաթ ընդհանուր տևողությամբ,

16) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ տեղափոխվելու մեկ այլ բարձրագույն ուսումնական հաստատություն, ներառյալ՝ օտարերկրյա պետությունների բարձրագույն ուսումնական հաստատությունները,

17) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և համալսարանում սահմանված կարգին համապատասխան՝ համալսարանի ներսում տեղափոխվել սովորելու մեկ այլ կրթական ծրագրով՝ պահպանելով նախորդ կրթական ծրագրում կուտակած կրեդիտները,

18) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և միջազգային շարժունության ծրագրերի պայմաններին համապատասխան՝ միջհամալսարանական պայմանագրերի շրջանակներում մինչև մեկ կիսամյակ տևողությամբ ուսումնառելու համալսարանի գործընկեր բարձրագույն ուսումնական հաստատություններում,

19) ուսման բարձր առաջադիմության, գիտահետազոտական աշխատանքներին մասնակցելու, այլ նշանակալի նվաճումների համար ստանալ բարոյական և (կամ) նյութական խրախուսանք՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և համալսարանի սահմանած կարգով,

20) վերականգնելու 2-ից 7-րդ կիսամյակներում ուսումնառության դադարեցման հետևանքով կորցրած ուսանողական իրավունքները,

21) հիմնական մասնագիտական ուսուցումը համատեղելու երկրորդ մասնագիտական ուսուցման հետ և ստանալու երկրորդ որակավորման աստիճան (որից՝ մեկը հեռակա կրթաձևով),

22) ստեղծելու ուսանողական հասարակական կազմակերպություններ ուսանողական կյանքին առնչվող խնդիրներով,

23) ստանալու ուսման տարեկան վարձի մասամբ կամ լրիվ փոխհատուցում՝

ա. ուսանողի ուսման վարձը, ուսման առաջադիմության հիման վրա, ուսանողական նպաստի ձևով լրիվ կամ մասնակիորեն փոխհատուցվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից՝ ամեն տարի տվյալ բուհին և մասնագիտությանը հատկացվող անվճար տեղերի, դրանց 10 տոկոսի չափով համալսարանի ֆինանսական միջոցների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրների հաշվին,

բ. ուսանողներին պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի համապատասխան փոխհատուցում (մասնակի (զեղչ)) տրամադրվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և ընթացակարգով,

գ. առաջին կուրսում ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցում տրամադրվում է Հայաստանի Հանրապետության պետական բուհերի ընդունելության կանոններով սահմանված կարգով համալսարան ընդունված ուսանողներին: Հաջորդ կուրսերում ուսանողական նպաստ տրվում է նախորդ ուսումնական տարվա քննությունների արդյունքներով առավել բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին՝ մրցութային հիմունքներով (միջին որակական գնահատականի (ՄՈԳ) հիման վրա),

դ. ուսանողի առաջադիմության արդյունքների և սոցիալական վիճակի հաշվառմամբ և նախորդ կիսամյակի միջին որակական գնահատականի (ՄՈԳ) արդյունքների հիման վրա համալսարանի միջոցների հաշվին ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցում (զեղչ) տրամադրելու չափանիշներն ու կարգը սահմանված են «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում ուսանողական նպաստ, պետական և անվանական կրթաթոշակներ հատկացնելու կարգով»,

24) ստանալ ուսանողական կրթաթոշակ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, պետական բյուջեի միջոցների հաշվին,

25) հրամանագրվելուց հետո անվճար ստանալ համալսարանի նույնականացման քարտ (ASUE ID CARD), որն ապահովում է համալսարան մուտքն ու ելքը և թույլ է տալիս օգտվել գրադարանի ծառայություններից, մասնակցել կենտրոնացված համակարգչային քննություններին (համալսարանի նույնականացման քարտը կորցնելու կամ վնասելու դեպքում տրվում է նոր քարտ՝ վճարովի հիմունքներով),

26) հրամանագրվելուց հետո ստանալ համալսարանի moodle.asue.am հարթակում ուսանողի նույնականացման մուտքանուն և ծածկագիր, որը տեսական

ուսուցման գործընթացում ուսանող-դասախոս հաղորդակցության միակ պաշտոնական հարթակն է, որտեղ վերբեռնվում են բոլոր դասընթացների ծրագրերը, գիտելիքի ստուգման հարցաշարերը, ուսումնառության համար անհրաժեշտ նյութերը, ինչպես նաև ուսանողների հաճախումներն ու ընթացիկ ակտիվությունը արտացոլող էլեկտրոնային մատյանների տվյալները (ամսական կտրվածքով)։

35. Համալսարանի ուսանողները պարտավոր են.

1) համալսարանի հետ կնքել ուսումնառության պայմանների մասին պայմանագիր,

2) սահմանված ժամկետներում կատարել բոլոր ուսումնական առաջադրանքները,

3) սահմանված ժամկետներում ներկայանալ քննություններին, ստուգարքներին և վերահանձնումներին՝ ըստ հաստատված ժամանակացույցների և քննագրաֆիկների,

4) պարբերաբար ստուգել moodle.asue.am հարթակի իրենց օգտահաշիվը, իսկ դրա մուտքանունն ու ծածկանունը չտրամադրել երրորդ անձանց,

5) տիրապետել կրթական ծրագրի վերջնարդյունքներով նախատեսված գիտելիքին, կարողություններին և հմտություններին,

6) կատարել համալսարանի կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով նախատեսված պարտականությունները,

7) պահպանել համալսարանի ներքին կարգապահական կանոնների, էթիկայի (բարեվարքության) կանոնակարգի և ներքին իրավական ակտերի պահանջները,

8) հաճախել դասախոսություններին, գործնական, սեմինար, լաբորատոր պարապմունքներին և մասնակցել փորձառությանը,

9) կատարել կրթական ծրագրում և դրա առանձին բաղադրիչների ծրագրերում ուսումնառությանը ներկայացվող պահանջները,

10) կրթական ծրագրի հետազոտական բաղադրիչները կատարելիս՝ պահպանել համալսարանում գործող ակադեմիական էթիկայի պահանջները,

11) խնամքով վերաբերվել համալսարանի գույքին,

12) պահպանել հասարակական համակեցության և բարոյականության նորմերի պահանջները,

13) ինքնուրույն ծանոթանալ ուսումնառության հետ կապված բոլոր փաստաթղթերին (քննագրաֆիկներ, ժամանակացույցներ, հարգելի պատճառով չներկայացած ուսանողների վերահանձնման, 1-ին և 2-րդ վերահանձնումների, չներկայացած ուսանողների վերահանձնման և առավելագույնը 12 կրեդիտ կազմող ակադեմիական պարտքերի 1-ին և 2-րդ վերահանձնումների ժամանակացույցներ, զեղչի դիմումների և այլ փաստաթղթերի ներկայացման ժամկետներ, փոխատեղման հրամաններ և այլն) համալսարանի տեղեկատվության տարածման համապատասխան միջոցներից (համալսարանի պաշտոնական կայք, ֆակուլտետի հայտարարությունների ցուցափեղկ, moodle հարթակ),

14) ժամանակին վճարել սահմանված ուսման վարձը՝

ա. ուսման վարձը հաշվեգրվում է ուսումնական տարվա սկզբում և ամբողջությամբ ենթակա է վճարման,

բ. ուսանողը ուսման վարձը կարող է վճարել ամսական, կիսամյակային կամ տարեկան վճարմամբ,

գ. ամսական վարձը վճարվում է յուրաքանչյուր ամիս մինչև տվյալ ամսվա 5-ը՝ ուսման վարձը հավասարաչափ բաժանելով տվյալ ուսումնական տարվա ամիսների թվին,

դ. առաջին կուրսում հրամանագրման ներկայացված ուսանողները մինչև տվյալ ուսումնական տարվա սեպտեմբերի 15-ը պետք է վճարեն առնվազն մեկ ամսվա ուսման վարձը,

ե. ուսումնառությունից ազատման դիմում ներկայացրած ուսանողների ուսման վարձը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով ազատման դիմումի ամսաթիվը,

եա. եթե ուսումնառությունից ազատվելու դիմումը գրվել է դեկտեմբերի 15-ից (1-ին կիսամյակում) և մայիսի 15-ից (2-րդ կիսամյակում) հետո, ապա որպես ուսման վարձի պարտք հաշվեգրվում է կիսամյակային չվճարված ուսման վարձը,

եբ. եթե ուսումնառությունից ազատվելու դիմումը գրվել է տվյալ ամսվա 5-ից հետո, ապա որպես ուսման վարձի պարտք հաշվեգրվում է նախորդող ամիսների և տվյալ ամսվա համար սահմանված և չվճարված ուսման վարձի հանրագումարը,

եգ. եթե ուսումնառությունից ազատվելու դիմումը գրվել է մինչև տվյալ ամսվա 5-ը, ապա որպես ուսման վարձի պարտք հաշվեգրվում է նախորդող ամիսների չվճարված ուսման վարձի հանրագումարը,

զ. ուսանողը կիսամյակի ուսման վարձի պարտքը պարտավոր է մարել նախքան քննաշրջանի սկիզբը,

է. ավարտական կուրսի ուսանողները ուսման վարձը կարող են վճարել ամսական սկզբունքով, սակայն ոչ ուշ, քան գիտահետազոտական փորձառության պաշտպանության օրը,

ը. առաջին կուրսի ուսանողները 1-ին կիսամյակի կամ ուսումնական տարվա առնվազն առաջին ամսվա ուսման վարձը վճարում են մինչև սեպտեմբերի 15-ը, հաջորդող ամիսներինը՝ մինչև տվյալ ամսվա 5-ը,

թ. սույն կետի 14-րդ ենթակետի «ը» պարբերությամբ սահմանված պարտավորությունը չկատարելու դեպքում ուսանողը չի հրամանագրվում,

թա. բացառիկ դեպքերում ռեկտորատը կարող է քննարկել և երկարաձգել կիսամյակի ուսման վարձը կամ դրա առնվազն առաջին ամսվա գումարը գանձելու ժամկետը,

թբ. բացառիկ դեպքերում ռեկտորատը կարող է քննարկել և պայմանական կերպով հրամանագրել ուսման վարձը (կամ առնվազն առաջին ամսվա համար նախատեսված գումարը) մինչև սեպտեմբերի 15-ը չվճարած ուսանողին՝ ըստ համալսարանի հետ կազմված վճարման առանձին ժամանակացույցի և ուսանողի պարտավորագրի,

ժ. կիսամյակի համար նախատեսված ուսման վարձը մինչև տվյալ կիսամյակի քննաշրջանի սկիզբը չվճարած ուսանողը կարող է հեռացվել համալսարանից,

ի. ուսման վարձը կայուն է ուսումնառության պայմանագրով նախատեսված ուսուցման ձևի ամբողջ ժամանակահատվածի համար,

իա. համալսարանից հեռացված և իրենց դիմումի հիման վրա ազատված ուսանողների համար, իրենց ուսանողական իրավունքները վերականգնելիս, ուսման վարձը հաշվարկվում է վերականգնման պահին տվյալ ուսումնական տարում տվյալ մասնագիտության համար սահմանված ուսման վարձի չափով և նրանց հետ կնքվում է ուսումնառության նոր պայմանագիր,

իբ. համալսարանում մի կրթաձևից մյուս կրթաձև կամ մի կրթական ծրագրից մյուսը տեղափոխվող ուսանողների համար ուսման վարձը հաշվարկվում է տեղափոխվելու պահին տվյալ մասնագիտության և կրթաձևի համար սահմանված ուսման վարձի չափով և նրանց հետ կնքվում է ուսումնառության պայմանագիրը փոփոխելու համաձայնագիր,

իգ. համալսարանում, սահմանված կարգով ուսումնառությունն ընդհատած ուսանողների համար, նույն մասնագիտության միևնույն կրթաձևով սահմանված ժամկետի ավարտին ուսանողական իրավունքները վերականգնելու պարագայում ուսման վարձը մնում է անփոփոխ՝ ըստ ուսանողի հետ կնքված պայմանագրում սահմանված չափի,

լ. կիսամյակում վճարված ուսման վարձը չի վերադարձվում, բացառությամբ առողջական վիճակի պատճառով ուսումնառությունն ընդհատելու և սեփական դիմումով համալսարանից ազատվելու դեպքերի: Վերադարձման ենթակա գումարը պետք է համապատասխանի ուսումնառություն չանցած ժամկետին,

խ. եթե վճարովի հիմունքներով սովորողը հեռացվել է համալսարանից և հեռացվելու պահին ունեցել է ուսման վարձի պարտք, ապա վերականգնման

ժամանակ մինչև հրամանագրվելը պետք է վճարի և՛ նախկինում հաշվեգրված պարտքը, և՛ տվյալ կիսամյակի համար նախատեսված ուսման վարձը,

ծ. վճարովի համակարգի ուսանողի ուսման՝ ավելի վճարված վարձը, իբրև կանխավճար, փոխանցվում է որպես հաջորդ կիսամյակի (և (կամ) հաջորդ կուրսի) ուսման վարձ, իսկ ավարտական կուրսում վերադարձվում է ուսանողին: Վճարովի հիմունքներով ասպիրանտուրա ընդունվելու դեպքում, ուսանողի դիմումի հիման վրա, կանխավճարը վերահաշվարկվում է որպես ասպիրանտուրայի կրթական ծրագրի ուսման վարձի վճար,

ծա. վճարովի համակարգի ուսանողն ուսման վարձը վճարելուց հետո դրա մասին պարտավոր է տեղեկացնել դեկանատին՝ ներկայացնելով վճարումը հավաստող համապատասխան վավեր փաստաթուղթ,

ծբ. պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված և իր մասնագիտությամբ վերականգնվող ուսանողի ուսման վարձի չափը չի փոխվում (մնում է զորակոչվելու պահին գործող վարձաչափը),

ծգ. համալսարան ընդունված, սահմանված ուսման վարձի առաջին ամսվա գումարը չվճարած, համալսարանի հետ ուսումնառության պայմանագիր չկնքած, պարտադիր ժամկետային զինվորական ծառայության զորակոչվելու պատճառով համալսարանի տվյալ կրթական ծրագրին կցագրված ուսանողների՝ զորացրվելուց հետո, իբրև ուսանող հրամանագրվելիս, որպես ուսման վարձ հաշվարկվում է հրամանագրման պահին տվյալ ուսումնական տարում տվյալ մասնագիտության համար սահմանված ուսման վարձի չափով և նրանց հետ կնքվում է ուսումնառության պայմանագիր,

ծդ. պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված և իր կամքից անկախ տվյալ մասնագիտությունը չլինելու պատճառով այլ մասնագիտությամբ վերականգնվող ուսանողի ուսման վարձը սահմանվում է զորակոչման պահին տվյալ մասնագիտության համար գործող ուսման վարձի չափով: Իսկ մասնագիտության առկայության դեպքում մասնագիտությունը փոխելու պարագայում ուսանողի ուսման վարձը սահմանվում է իր նախընտրած

մասնագիտության տվյալ ուսումնական տարվա (վերականգնվող ուսումնական տարվա) ընդունելությամբ սահմանված ուսման վարձի չափով,

ծե. ուսման վարձը վճարվում է փոխանցման կարգով՝ կենտրոնական գանձապետարանում բացված գանձապետական հաշվին:

3. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՐԱԽՈՒՍԱՆՔԻ ԵՎ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ, ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՑ ՀԵՌԱՑՈՒՄԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՏՈՒՄԸ

36. Ուսանողների բարձր առաջադիմության, գիտահետազոտական և հասարակական աշխատանքներին ակտիվ մասնակցության կամ այլ նշանակալի նվաճումների համար համալսարանում սահմանված են խրախուսանքի հետևյալ տեսակները.

1) շնորհակալության հայտարարում,

2) պատվոգրի շնորհում,

3) հուշանվերով պարգևատրում,

4) միանվագ դրամական պարգևատրում,

ա. ուսանողին խրախուսանքը տրվում է ռեկտորի հրամանով, ինչի մասին տեղեկատվությունը հրապարակվում է համալսարանի տեղեկատվության տարածման միջոցներով,

բ. խրախուսանքի մասին հրամանի քաղվածքը պահվում է ուսանողի անձնական գործում:

37. Ուսումնական պլանները չկատարող, ակադեմիական անբավարար առաջադիմություն ցուցաբերող, ուսումնական գործընթացի ժամանակացույցը, համալսարանի կանոնադրության դրույթները և ներքին կարգապահական կանոնները խախտող ուսանողների նկատմամբ կարող են կիրառվել կարգապահական տույժեր՝ ներառյալ հեռացում համալսարանից.

1) կարգապահական տույժը կիրառվում է ռեկտորատի որոշմամբ և ռեկտորի կամ նրա լիազորած անձի հրամանով,

2) կարգապահական տույժը կիրառվում է կարգապահական խախտումները հայտնաբերելու պահից: Եթե ուսանողը մեկ տարվա ընթացքում կարգապահական նոր տույժի չի ենթարկվում, ապա համարվում է կարգապահական տույժը մարված:

38. Ուսանողների նկատմամբ կարող են կիրառվել հետևյալ կարգապահական տույժերը.

1) նկատողություն,

2) խիստ նկատողություն,

3) համալսարանից հեռացում:

39. Համալսարանի գույքին պատճառած վնասի համար ուսանողը կրում է գույքի փոխհատուցման պատասխանատվություն գործող օրենսդրությանը համապատասխան.

1) ուսանողներն իրավունք չունեն, առանց իրավասու անձի թույլտվության, լաբորատորիաներից և ուսումնական շենքերից դուրս հանել համալսարանին պատկանող գույքը և սարքավորումները:

40. Պետական կրթաթոշակ ստացող ուսանողին պետական կրթաթոշակի տրամադրումը վերանայվում է յուրաքանչյուր ուսումնական կիսամյակի ավարտին: Պետական կրթաթոշակի տրամադրման պայմանները չապահովելու դեպքում ուսանողը զրկվում է պետական կրթաթոշակից: Ազատված պետական կրթաթոշակները մրցութային կարգով հատկացվում են այլ ուսանողների:

41. Համալսարանից ուսանողը հեռացվում է.

1) անբավարար ակադեմիական առաջադիմություն ցուցաբերելու պատճառով կիսամյակի արդյունքներով անհրաժեշտ գումարային կրեդիտներ չհավաքելու դեպքում,

2) համալսարանի կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով նախատեսված պարտականությունների խախտման դեպքում,

3) համալսարանի կողմից սահմանված ժամկետում ուսման վարձը չվճարելու դեպքում:

42. Արգելվում է ուսանողներին համալսարանից հեռացնել հիվանդության, ակադեմիական, հղիության ու ծննդաբերության և այլ արձակուրդների ընթացքում:

43. Համալսարանից ուսանողը ազատվում է.

1) իր դիմումի համաձայն,

2) այլ բուհ տեղափոխվելու դեպքում:

44. Ուսանողի ուսումնառությունը դադարեցվում է.

1) ժամկետային պարտադիր կամ շարքային և սպայական կազմերի պարտադիր զինծառայողների՝ ծառայության ընթացքում պայմանագրային զինվորական կամ այլընտրանքային ծառայության զորակոչվելու դեպքում,

*(44-**րդ կետի** 1-**ին ենթակետը փոփ., խմբ.** 13.11.2024 N 3-3)*

2) հղիության և ծննդաբերության, ինչպես նաև մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու դեպքերում,

3) առողջական վիճակի պատճառով ակադեմիական արձակուրդ ձևակերպելու դեպքում:

4. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

45. Համալսարանում ուսումնական պարապմունքներն անցկացվում են հաստատված ուսումնական պլաններին, առարկայական ծրագրերին և ուսումնական տարվա ժամանակացույցին համապատասխան:

46. Դասացուցակը կազմվում է կիսամյակի համար և հրապարակվում է տվյալ կիսամյակը սկսվելուց ոչ ուշ, քան 3 օր առաջ:

46.1. Մոդուլային սկզբունքով իրականացվող կրթական ծրագրերի պարագայում դասացուցակը կազմվում է յուրաքանչյուր մոդուլի համար և հրապարակվում է տվյալ մոդուլը սկսվելուց ոչ ուշ, քան 7 օր առաջ:

47. Համալսարանում մեկ դասի (ակադեմիական ժամի) տևողությունը 80 րոպե է: Պարապմունքների ակադեմիական ժամի ավարտից հետո սահմանված է ընդմիջում՝ 10 րոպե տևողությամբ: Երկրորդ և երրորդ պարապմունքների միջև սահմանված է ընդմիջում՝ 25 րոպե տևողությամբ:

48. Պարապմունքի սկզբի համար սահմանված ժամից հետո ուսանողի մուտքը լսարան մինչև ընդմիջումը, առանց դասախոսի թույլտվության, արգելվում է: Պարապմունքները բնականոն անցկացնելու համար բոլոր ուսումնական մասնաշենքերում պարապմունքների համար նախատեսված ժամերին արգելվում է աղմկելը:

49. Լսարաններում, լաբորատորիաներում գործնական պարապմունքներ անցկացնելու համար յուրաքանչյուր կուրս բաժանվում է խմբերի և ենթախմբերի:

50. Յուրաքանչյուր խմբում առավել կարգապահ և առաջադեմ ուսանողներից ընտրվում է ավագ, որն իր խմբին տեղեկացնում է դեկանի հանձնարարությունների ու ցուցումների մասին:

51. Յուրաքանչյուր խմբի համար լրացվում է մատյան: Դասախոսը պարտավոր է յուրաքանչյուր պարապմունքին անձամբ գրանցումներ կատարել մատյանում:

52. Արգելվում է, առանց դասախոսի թույլտվության, պարապմունքների ժամանակ էլեկտրոնային սարքեր և բջջային հեռախոսներ օգտագործելը:

5. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

53. Համալսարանի կրթական ծրագրերը բաղկացած են պարտադիր և ընտրովի դասընթացներից:

54. Համալսարանի կրթական ծրագրերում ներառված որոշ պարտադիր դասընթացներ (հետազոտական աշխատանքի կամ փորձառության բաղադրիչ չպարունակող) կարող են ուսանողի ընտրությամբ փոխարինվել հետազոտական

աշխատանքով: Նման դասընթացները ուսումնական պլանում ներառված են որպես ընտրովի դասընթացներ, որոնց ընտրության «փոխարինող» մոդուլը նույն դասընթացի շրջանակներում իրականացվող հետազոտական աշխատանքն է:

55. Կրթական ծրագրերում ներառված դասընթացների պարտադիր կամ ընտրովի լինելը, հետազոտական աշխատանքով փոխարինման հնարավորությունը որոշվում է կրթական ծրագրով՝ հստակեցվում հաստատված ուսումնական պլանով:

56. Կրթական ծրագրի ուսումնական պլանում ներառված դասընթացները ենթակա չեն փոփոխման կրթական ծրագիրն ուսումնառող տվյալ կուրսի համար: Բացառիկ դեպքերում կրթական ծրագիրն իրականացնող ամբիոնի ներկայացրած հիմնավորումներին և գիտական խորհրդին կից ուսումնամեթոդական հանձնաժողովի դրական եզրակացությանը հավանություն տալու դեպքում, գիտական խորհրդի որոշմամբ, կրթական ծրագրում ներառված որոշ դասընթացներ (ոչ ավելի, քան տվյալ կիսամյակում նախատեսված մեկ դասընթաց) կարող են փոխարինվել կրթական ծրագրի միևնույն վերջնարդյունքի ձևավորմանը ծառայող համարժեք դասընթացներով: Փոփոխությունները կատարվում են մինչև նախորդ ուսումնական տարվա մայիսի 1-ը ներառյալ:

57. Կրթական ծրագրերի ուսումնական պլաններում ներառված յուրաքանչյուր ընտրովի դասընթաց մատուցվում է մեկ կիսամյակի ընթացքում:

58. Ուսանողներին ընտրության համար առաջարկվող դասընթացների քանակը առնվազն մեկով պետք է գերազանցի ուսումնական պլանում համապատասխան կիսամյակում ներառված ընտրովի դասընթացի (դասընթացների) քանակը:

59. 1,5 տարի ուսուցման տևողությամբ մագիստրոսի կրթական ծրագրերում ընտրովի դասընթացներ կարող են առաջարկվել 2-րդ կիսամյակի ընթացքում, իսկ 2 տարի ուսուցման տևողությամբ ծրագրերում՝ 2-րդ և 3-րդ կիսամյակների ընթացքում:

60. 1,5 տարի ուսուցման տևողությամբ մագիստրոսի կրթական ծրագրերում հետազոտությամբ փոխարինվող դասընթացներ կարող են առաջարկվել 1-ին և 2-րդ

կիսամյակների ընթացքում, իսկ 2 տարի ուսուցման տևողությամբ ծրագրերում՝ 1-ին, 2-րդ և 3-րդ կիսամյակների ընթացքում:

61. Մոդուլային սկզբունքով իրականացվող կրթական ծրագրերում ընտրովի դասընթացները ներառվում են 2-րդ ցիկլից սկսած, իսկ հետազոտությամբ փոխարինվող դասընթացները՝ 1-ին ցիկլից սկսած:

62. Առաջին կուրսերում ընտրովի և հետազոտությամբ փոխարինվող դասընթացների (եթե այդպիսիք ներառված են ուսումնական պլանում) ընտրությունը կազմակերպվում է ընդունող հանձնաժողովի կողմից՝ մրցույթը հաղթահարած և մագիստրատուրա ընդունվելու համար առաջին ամսվա ուսման վարձը վճարած դիմորդների շրջանում: Ընտրությունն իրականացվում է դիմորդների էլեկտրոնային քվեարկությամբ:

63. Նախքան ընտրության կազմակերպումը՝ ընդունող հանձնաժողովը էլեկտրոնային նամակով դիմորդներին է առաքում առաջին ուսումնական տարվա 1-ին և 2-րդ կիսամյակներում (մոդուլային կրթական ծրագրերի դեպքում՝ 1-ին և հաջորդող մոդուլներում) ներառված այն դասընթացների ցանկը, որոնք կարող են փոխարինվել տվյալ դասընթացից հետազոտությամբ և 2-րդ կիսամյակի (մոդուլային կրթական ծրագրերի դեպքում՝ 2-րդ և հաջորդող մոդուլներում) ընտրովի դասընթացների ծրագրերի համառոտագրերը և ընտրության պայմանները (ներկայացված դասընթացներից քանի՞ դասընթաց պետք է ընտրվի):

64. 2 տարի ուսուցման տևողությամբ կրթական ծրագրերի 3-րդ կիսամյակի ընտրովի դասընթացների պարագայում յուրաքանչյուր ուսումնական տարվա մինչև ապրիլի 10-ը moodle.asue.am հարթակում ուսանողները տեղեկացվում են տվյալ կիսամյակի ընտրովի դասընթացների ցանկին, նույն հարթակում ներկայացվում են նաև ընտրության դրված դասընթացների ծրագրերը, դրանց բովանդակությունը, ակնկալվող վերջնարդյունքները, ուսումնառության և գիտելիքի գնահատման ընտրված սկզբունքները, դասավանդող դասախոսների տվյալները, ինչպես նաև դասընթացների ընտրության պայմանները:

65. Դասընթացների ընտրությունը կազմակերպվում է moodle.asue.am հարթակում, իսկ ընտրությունը կազմակերպում են համալսարանի տեղեկատվական տեխնոլոգիաների և ուսումնական բաժինները, դեկանատը և կրթական ծրագիրն իրականացնող ամբիոնը (ամբիոնները) համատեղ:

66. moodle.asue.am հարթակում ընտրության դրված դասընթացներին ծանոթանալու և ընտրություն կատարելու համար ուսանողներին տրամադրվում է 30 օր:

67. Ընտրված է համարվում այն դասընթացը, որի համար ընդունող հանձնաժողովի ձևավորած էլեկտրոնային քվեարկությանը կամ moodle.asue.am հարթակում (3-րդ կիսամյակի առարկաների դեպքում) գրանցվել է առնվազն 10 ուսանող: Հակառակ դեպքում տվյալ դասընթացին գրանցված փոքրաթիվ ուսանողներին առաջարկվում է միանալ որևէ կայացած խմբի:

68. Փոքրաթիվ խմբերի դեպքում (մինչև 15 ուսանող) կայանում է այն դասընթացը, որն ընտրվել է մեծամասնության կողմից:

6. ԳԻՏԵԼԻՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱԶՄԱԳՈՐԾՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ, ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԵՎ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ

69. Մագիստրատուրայի բոլոր դասընթացները տարբերակված գնահատմամբ են (ավարտվում են քննությամբ), որի դեպքում գնահատումները կատարվում են թվային և տառային նշագրմամբ:

69.1. 2 տարի ուսուցման տևողությամբ մագիստրոսի կրթական ծրագրերում դասընթացները լինում են տարբերակված գնահատմամբ (որի դեպքում գնահատումները կատարվում են թվային և թվերի որոշակի միջակայքին համապատասխանող տառային նշագրմամբ) և ստուգարքով գնահատվող (որի դեպքում դասընթացը գնահատվում է «ստուգված / չստուգված» սկզբունքով և դրան համապատասխանող տառային նշագրմամբ):

70. Ուսանողի գիտելիքի գնահատումը կատարվում է ըստ սահմանված ժամանակացույցի և հաստատված քննագրաֆիկների:

71. Դասախոսը պարտավոր է կիսամյակը սկսելուց հետո 15 օրվա ընթացքում (մոդուլային կրթական ծրագրերում մոդուլը սկսելուց 5 օրվա ընթացքում) moodle.asue.am հարթակ վերբեռնել դասընթացի առարկայական ծրագիրը, գիտելիքի ստուգման հարցաշարը, ուսումնառության համար անհրաժեշտ բոլոր նյութերը:

72. Յուրաքանչյուր դասընթացի շրջանակներում ուսանողի վերջնական գնահատականը ձևավորվում է գնահատման սահմանված գործոնների և դրանց միավորների հանրագումարի հիման վրա՝ հաշվի առնելով «հաճախումներ-ընթացիկ ակտիվություն», «գիտահետազոտական աշխատանք» (եթե նախատեսվել է), «փորձառություն» (եթե նախատեսվել է) և «գիտելիքի ամփոփիչ ստուգում» կամ «հետազոտության արդյունք» գործոնները՝ սույն կարգի N 5 հավելվածում սահմանված կշիռներով:

73. Քննությամբ ավարտվող և գիտահետազոտական աշխատանք պարունակող դասընթացների դեպքում գիտելիքի գնահատումն իրականացվում է՝ ըստ «հաճախումներ-ընթացիկ ակտիվություն», «գիտահետազոտական աշխատանք» և «ամփոփիչ քննություն» գործոններով ուսանողի ստացած գնահատականների հանրագումարի (N 1 և N 5 հավելվածներում բերված գործոնների կշիռներով):

74. Մոդուլային սկզբունքով իրականացվող կրթական ծրագրերում քննությամբ ավարտվող և փորձառություն պարունակող դասընթացների դեպքում գիտելիքի գնահատումն իրականացվում է՝ ըստ «հաճախումներ-ընթացիկ ակտիվություն», «գիտահետազոտական աշխատանք» և «ամփոփիչ քննություն» գործոններով ուսանողի ստացած գնահատականների հանրագումարի (N 1.1 և N 5 հավելվածներում բերված գործոնների կշիռներով):

74.1. Մոդուլային սկզբունքով իրականացվող կրթական ծրագրերում փորձառություն պարունակող դասընթացները գիտահետազոտական բաղադրիչ չեն պարունակում:

75. Քննությամբ ավարտվող և գիտահետազոտական աշխատանք կամ փորձառություն չպարունակող դասընթացների դեպքում գիտելիքի գնահատումն իրականացվում է՝ ըստ «հաճախումներ-ընթացիկ ակտիվություն» և «ամփոփիչ քննություն» գործոններով ուսանողի ստացած գնահատականների հանրագումարի (N 2 և N 5 հավելվածներում բերված գործոնների կշիռներով):

76. Ստուգարքով ավարտվող դասընթացների դեպքում գիտելիքի գնահատումն իրականացվում է՝ ըստ «հաճախումներ-ընթացիկ ակտիվություն» և «ամփոփիչ ստուգում» գործոններով ուսանողի ստացած գնահատականների հանրագումարի (N 1.2 և N 5 հավելվածներում բերված գործոնների կշիռներով):

77. Այն դասընթացները, որոնք հնարավոր է ուսանողի ընտրությամբ փոխարինել հետազոտությամբ, ուսանողի վերջնական գնահատականը ձևավորվում է գնահատման մեկ գործոնի՝ «հետազոտության արդյունքի» միավորի հիման վրա (N 2.1 և N 5 հավելվածներում բերված գործոնների կշիռներով):

78. Յուրաքանչյուր դասընթացի վերջնական գնահատականի ձևավորման «հաճախումներ-ընթացիկ ակտիվություն», «գիտահետազոտական աշխատանք» (եթե դա նախատեսվել է), «փորձառություն» (եթե դա նախատեսվել է) և «գիտելիքի ամփոփիչ ստուգում» կամ «հետազոտության արդյունք» գործոնները ամբիոնի կողմից սահմանվում են համապատասխան դասընթացների ծրագրերում:

79. Ներկայացված գործոնները կարող են հաստատվել կամ համապատասխան հիմնավորվածությամբ փոփոխվել ամբիոնի նախաձեռնությամբ և ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ մինչև տվյալ ուսումնական տարվա համապատասխան կիսամյակի սկիզբը (օգոստոսի 30-ին կամ հունվարի 30-ին):

80. Բոլոր գնահատականները գրանցվում են ստորակետից հետո 2 նիշի ճշտությամբ:

81. Կիսամյակի քննաշրջանից հետո կամ կիսամյակի ավարտին (դասընթացների մոդուլային կազմակերպման դեպքում) յուրաքանչյուր դասընթացի համար հաշվարկվում է ուսանողի վերջնական գնահատականը:

82. Քննությամբ ավարտվող դասընթացների համար հաշվարկային գնահատականը նույնացվում է տառային նիշով՝ սույն կարգի N 4 հավելվածում սահմանված սկզբունքներով:

83. Դասընթացի անհրաժեշտ կրեդիտները ստանալու համար ուսանողը գիտելիքի բազմագործոնային գնահատման համակարգի 20 միավորային սանդղակով պետք է գնահատման գործոնների հանրագումարում հավաքի առնվազն 8 միավոր:

84. «Հաճախումները և ընթացիկ ակտիվությունը» բազմագործոնային գնահատման համակարգի միավորված գործոն են: Ուսանողի հաճախումների ցուցանիշն անդրադառնում է ընթացիկ ակտիվության գործոնի գնահատականի վրա: Հաճախումների՝ ընթացիկ ակտիվության գնահատականի վրա ազդեցության մեխանիզմը սահմանված է սույն կարգի N 5.1 հավելվածում:

85. «Հաճախումներ և ընթացիկ ակտիվություն» բաղադրիչը «գիտահետազոտական աշխատանք» կամ «փորձառություն» պարունակող և քննությամբ ավարտվող դասընթացների համար գնահատվում է 0-ից մինչև 6 միավոր, «գիտահետազոտական աշխատանք» կամ «փորձառություն» չպարունակող և քննությամբ ավարտվող դասընթացների համար՝ 0-ից մինչև 10 միավոր միջակայքում: Գնահատումն իրականացվում է 1.0 միավոր քայլով:

1) Հաճախումների հաշվառման և ընթացիկ ակտիվության գնահատման համար պատասխանատու է դասախոսը, ով համապատասխան գրանցումներ է կատարում թղթային մատյանում և ums.asue.am համակարգի էլեկտրոնային մատյանում:

2) Հաշվառվում են ուսանողների հաճախումները դասախոսություններին, գործնական, սեմինար և լաբորատոր պարապմունքներին՝ ակադեմիական խմբին

դեկանատի կողմից հատկացված մատյաններում և ums.asue.am համակարգի էլեկտրոնային մատյանում:

3) Յուրաքանչյուր ամսվա վերջին օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում ums.asue.am համակարգի էլեկտրոնային մատյանում արձանագրված բացակայությունների և ընթացիկ ակտիվությունների նախորդող ամսվա տվյալները (ըստ ուսումնական պլանով տվյալ կիսամյակում ներառված դասընթացների) զետեղվում են moodle.asue.am հարթակում նախատեսված մոդուլում:

4) Ընթացիկ ակտիվությունը գնահատվում է դասախոսությունների, գործնական, սեմինար և լաբորատոր պարապմունքների ժամանակ դասախոսի հարցումների հիման վրա՝ ըստ դասախոսի հարցադրումներին ուսանողների տված պատասխանների կամ գնահատման նպատակով ակադեմիական խմբի հետ հստակեցված որևէ այլ եղանակի, որը նախատեսված է եղել դասընթացի ծրագրով:

5) Ընթացիկ ակտիվությունը գնահատվում է յուրաքանչյուր դասընթացի շրջանակներում՝ տվյալ կիսամյակի ընթացքում դասախոսի հարցումների արդյունքի հիման վրա:

6) Ընթացիկ ակտիվության վերջնական գնահատականը ձևավորվում է բոլոր հարցումներից ուսանողի ստացած գնահատականների միջին թվաբանականի հիման վրա՝ ստորակետից հետո տասնորդականի ճշգրտությամբ (կլորացման սկզբունքով):

7) Կիսամյակի ընթացքում մեկ հարցման գնահատական ունենալու պարագայում, որպես ակտիվության վերջնական գնահատական, նշվում է կիսամյակի ընթացքում հարցման արդյունքում ստացած գնահատականի կեսը՝ ստորակետից հետո տասնորդականի ճշգրտությամբ (կլորացման սկզբունքով):

*(85-**րդ կետի 7-րդ ենթակետը փոփ., խմբ.** 27.09.2024 N 1-4)*

8) Ընթացիկ ակտիվության վերջնական գնահատականը ճշգրտվում է հաճախումների ցուցանիշով՝ ըստ սույն կարգի N 5.1 հավելվածի:

9) Հաճախումները և ընթացիկ ակտիվությունը չեն կարող հաշվառվել և գնահատվել ըստ դասախոսի անհատական գրառումների:

10) Դասախոսն իրավունք չունի ընթացիկ ակտիվության գնահատման համար մատյանում կատարել գրառումներ՝ առանց ուսանողի հարցման:

11) Դասախոսն իրավասու չէ ուսանողի բացակայությունը համարել հարգելի և մատյանում կատարել ուսանողի բացակայությունների շտկումներ:

12) Դասախոսն իրավասու չէ մատյանում կատարել ուսանողի ընթացիկ հարցման գնահատականների (ներառյալ՝ 0 գնահատական) շտկումներ կամ ջնջումներ:

13) Մատյանում բացակայությունների և ընթացիկ հարցումների գնահատականների վերաբերյալ գրանցումները վերահսկում է ֆակուլտետի դեկանը: Ուսանողների ընդհանուր բացակայությունները հաշվառվում են դեկանատում:

14) Բացակայությունների վերաբերյալ գրանցումները գնահատման ամփոփաթերթում կատարում է դասախոսը:

15) ums.asue.am էլեկտրոնային դեկանատի համակարգը կիսամյակի ընթացքում յուրաքանչյուր դասընթացի մատյանում ուսանողի ընթացիկ ակտիվության հարցումների արդյունքում դասախոսների կատարած նշումների և արձանագրած բացակայության նշումների հիման վրա ավտոմատ կերպով հաշվարկում է յուրաքանչյուր ուսանողի ընթացիկ ակտիվության կիսամյակային ամփոփ գնահատականը:

16) Հաճախումները և ընթացիկ ակտիվությունը ամփոփվում են (անցկացվում են համարակալված և կնքված քննական ամփոփաթերթ) մինչև քննաշրջանի մեկնարկը տվյալ դասընթացի քննաշրջանին նախորդող վերջին դասաժամի օրվա դրությամբ:

17) Ուսանողի ակտիվությունը հաշվառելիս՝ հարգելի և անհարգելի բացակայությունները տարբերակվում են: Հարգելի են համարվում՝

ա. հիվանդության պատճառով մեկ և ավելի օր տևողությամբ բացակայությունները. այս դեպքում ուսանողը դասերի հաճախելուց հետո ոչ ուշ, քան 10 օրվա ընթացքում բացակայությունը հարգելի համարելու մասին դիմում է ներկայացնում ֆակուլտետի դեկանին, որին կից ներկայացնում է հիվանդության մասին քաղվածք ամբուլատոր բժշկական քարտից և դեկանն ընդունում է համապատասխան որոշում,

բ. ռեկտորատի որոշմամբ մեկ շաբաթ և ավելի տևողությամբ բացակայություններն այլ պատճառներով (ընտանեկան, գիտական, մարզամշակութային միջոցառումներին, Erasmus+ ծրագրով կարճաժամկետ փոխանակման կրթական ծրագրերին, համալսարանի կազմակերպած պաշտոնական միջոցառումներին կամավոր մասնակցություն կամ այլ բացառիկ դեպքեր):

86. Քննությամբ ավարտվող դասընթացի վերջնական գնահատականի ձևավորման գործոն է «ուսանողի գիտահետազոտական աշխատանքը», եթե այն, որպես գիտելիքի ստուգման գործոն, սահմանված է եղել կրթական ծրագրի ուսումնական պլանում և դասընթացի ծրագրում:

87. Գիտահետազոտական աշխատանքը մագիստրատուրայում ուսումնառության կարևոր բաղադրիչներից է:

88. Ուսանողի գիտահետազոտական աշխատանքը գիտելիքի գնահատման բազմագործոնային համակարգի գործոն է, եթե այն, որպես գիտելիքի ստուգման գործոն, սահմանված է կրթական ծրագրի ուսումնական պլանում և դասընթացի ծրագրում:

89. Որպես գիտելիքի գնահատման գործոն՝ գիտահետազոտական աշխատանք պարունակում են այն մասնագիտական դասընթացները, որոնք նպաստում են կրթական ծրագրի հետազոտական վերջնարդյունքների ձևավորմանը:

90. Կիսամյակի ընթացքում գիտահետազոտական աշխատանք պարունակող դասընթացների քանակը չի սահմանափակվում: Նշված

դասընթացներն առաջարկում է կրթական ծրագիրն իրականացնող ամբիոնը, հաստատում՝ գիտական խորհրդին կից ուսումնամեթոդական հանձնաժողովը:

91. Եթե դասընթացը նախատեսված է թիմային աշխատանքի և միջառարկայական թիմերում աշխատելու վերջնարդյունքների ձևավորման համար, գիտահետազոտական աշխատանքը կարող է հանձնարարվել մեկից ավելի ուսանողներից բաղկացած խմբին:

92. Գիտահետազոտական աշխատանքի իրականացման ընթացքում դասախոսը պարտավոր է ուսանողին կամ ուսանողների խմբին տրամադրել արտալսարանային խորհրդատվություն՝ դրա համար նախատեսված և խմբի հետ համաձայնեցված ձևաչափով և ժամկետներում:

93. Գիտահետազոտական աշխատանքը չի կարող լինել արտագրություն կամ թարգմանություն սկզբնաղբյուրներից: Այն պետք է պարունակի որոշակի հետազոտություն, խնդրի լուծում, վերլուծություն կամ մշակում: Գիտահետազոտական աշխատանքում գրագողության կամ ակադեմիական բարեվարքության այլ սկզբունքների խախտման փաստի արձանագրման դեպքում աշխատանքը ենթակա է վերադարձման:

94. Յուրաքանչյուր դասընթացի շրջանակներում կարող է առաջարկվել միայն մեկ գիտահետազոտական աշխատանք:

95. Գիտահետազոտական աշխատանքի բովանդակությանը, կատարմանը և շնորհանդեսին ներկայացվող պահանջները, գնահատման սկզբունքները, չափանիշները և պաշտպանության անցկացման կարգը սահմանվում են դասընթացի ծրագրով: Դասախոսը պարտավոր է ուսանողներին ծանոթացնել գիտահետազոտական աշխատանքի կատարման և պաշտպանության պահանջներին:

96. Գիտահետազոտական աշխատանքի թեմաները և տրման ձևը հաստատում է ամբիոնը: Թեմաներն առնչվում են տվյալ դասընթացի ծրագրի հետ: Գիտահետազոտական աշխատանքի թեմաները չեն կարող կրկնվել նույն խմբի ուսանողների համար:

97. Գիտահետազոտական աշխատանքը հանձնարարվում է դասերի մեկնարկից 2 շաբաթվա ընթացքում. իրականացման ժամկետը որոշում է դասախոսը (նվազագույնը մեկ ամիս՝ թեման հանձնարարելուց հետո):

98. Գիտահետազոտական աշխատանքն իրականացվում է գրավոր (համակարգչային շարվածքով)՝ ուսումնական բաժնի կողմից ներկայացված պահանջների համաձայն:

99. Գիտահետազոտական աշխատանքի պաշտպանությունը կազմակերպվում է դրա հանձնման վերջնաժամկետից առնվազն 10 օր հետո, որի արդյունքները ամփոփվում են ոչ ուշ, քան կիսամյակի քննաշրջանի մեկնարկից մեկ շաբաթ առաջ:

100. Գիտահետազոտական աշխատանքը ներկայացվում է դրա համար սահմանված ձևաչափով (տպագիր, շնորհանդեսի ձևով և այլն)՝ անհատական աշխատանքի վերջնական տարբերակը վերբեռնելով moodle.asue.am հարթակ:

101. Դասախոսը գնահատում և ստորագրում է գիտահետազոտական աշխատանքը՝ գրավոր (հակիրճ) հիմնավորելով նշված գնահատականը:

102. Գիտահետազոտական աշխատանքին ներկայացված պահանջներից որևէ մեկին չբավարարելու դեպքում աշխատանքը չի գնահատվում և վերադարձվում է լրամշակման (բացառությամբ ակադեմիական անազնվության բացահայտված դեպքերի, որի պարագայում աշխատանքն առհասարակ գնահատման ենթակա չէ), որի համար ուսանողին հատկացվում է 5 օր:

103. Գիտահետազոտական աշխատանքի պաշտպանությունը պարտադիր է, իսկ չներկայացված կամ ներկայացված, բայց չպաշտպանած աշխատանքի գնահատականը հավասար է 0-ի:

104. Տվյալ դասընթացի համար գիտահետազոտական աշխատանքի գնահատականը դասախոսի կողմից ամփոփաթերթում արձանագրվում է մինչև կիսամյակային դասընթացների վերջին շաբաթվա մեկնարկը:

105. Գիտահետազոտական աշխատանքը գնահատվում է որպես մաս վերջնական հաշվարկային գնահատականի՝ 0-4 միավոր միջակայքում:

Գիտահետազոտական աշխատանքի գնահատումն իրականացվում է 0,25 միավոր քայլով:

106. Գիտահետազոտական աշխատանքի գնահատականի մասին ուսանողը տեղեկացվում է պաշտպանությունից անմիջապես հետո:

107. Գիտահետազոտական աշխատանքները հաշվառվում և պահպանվում են moodle.asue.am հարթակում՝ մինչև կիսամյակի միջին որակական գնահատականի (ՄՈԳ) հրապարակումը:

108. Մոդուլային սկզբունքով իրականացվող կրթական ծրագրերում քննությամբ ավարտվող դասընթացի վերջնական գնահատականի ձևավորման գործոն է «ուսանողի փորձառությունը», եթե այն, որպես գիտելիքի ստուգման գործոն, սահմանված է եղել կրթական ծրագրի ուսումնական պլանում և դասընթացի ծրագրում:

109. Դասընթացում ներառված փորձառությունը գիտելիքի գնահատման բազմագործոնային համակարգի գործոն է, եթե այն, որպես գիտելիքի ստուգման գործոն, սահմանված է կրթական ծրագրի ուսումնական պլանում և դասընթացի ծրագրում:

110. Որպես գիտելիքի գնահատման գործոն՝ փորձառության բաղադրիչ պարունակում են մասնագիտական այն դասընթացները, որոնք նպաստում են կրթական ծրագրի կիրառելի վերջնարդյունքների ձևավորմանը:

111. Կիսամյակի ընթացքում և մոդուլների ցիկլերում փորձառություն պարունակող դասընթացների քանակը չի սահմանափակվում: Նշված դասընթացներն առաջարկում է կրթական ծրագիրն իրականացնող ամբիոնը, հաստատում՝ գիտական խորհրդին կից ուսումնամեթոդական հանձնաժողովը:

112. Դասընթացում ներառված փորձառության ընթացքում դասախոսը պարտավոր է ուսանողին կամ ուսանողների խմբին տրամադրել արտալսարանային խորհրդատվություն՝ դրա համար նախատեսված և խմբի հետ համաձայնեցված ձևաչափով և ժամկետներում:

113. Դասընթացում ներառված փորձառությունն ավարտվում է փորձառության արդյունքների հաշվետվության ներկայացմամբ: Հաշվետվությունը պետք է պարունակի փորձառության վայրի օբյեկտին առնչվող որոշակի վերլուծություն և բացահայտված խնդիրների լուծմանն առնչվող առաջարկություններ: Փորձառության հաշվետվության մեջ գրագողության կամ ակադեմիական բարեվարքության այլ սկզբունքների խախտման փաստի արձանագրման դեպքում աշխատանքը ենթակա է վերադարձման:

114. Յուրաքանչյուր դասընթացի շրջանակներում կարող է առաջարկվել միայն մեկ փորձառություն:

115. Դասընթացի շրջանակներում կազմակերպվող փորձառությանը, դրա հաշվետվությանը և շնորհանդեսին ներկայացվող պահանջները, գնահատման սկզբունքները, չափանիշները և պաշտպանության անցկացման կարգը սահմանվում են դասընթացի ծրագրով: Դասախոսը պարտավոր է ուսանողներին ծանոթացնել փորձառության կատարման և պաշտպանության պահանջներին:

116. Դասընթացում ներառված փորձառության վայրերը և անցկացման ձևը հաստատում է ամբիոնը:

117. Դասընթացի շրջանակներում կազմակերպվող փորձառության վայրերը, ըստ ուսանողների, հստակեցվում են դասընթացի մեկնարկից մեկ շաբաթվա ընթացքում. իրականացման ժամկետը (նվազագույնը 2 շաբաթ) և հաշվետվության հանձնման վերջնաժամկետը (նվազագույնը մեկ ամիս) որոշում է դասախոսը:

118. Դասընթացում ներառված փորձառության հաշվետվությունը ներկայացվում է գրավոր (համակարգչային շարվածքով)՝ համաձայն ուսումնական բաժնի կողմից ներկայացված պահանջների:

119. Դասընթացում ներառված փորձառության հաշվետվության պաշտպանությունը կազմակերպվում է դրա հանձնման վերջնաժամկետից առնվազն 10 օր հետո, որի արդյունքներն ամփոփվում են ոչ ուշ, քան կիսամյակի քննաշրջանի մեկնարկից մեկ շաբաթ առաջ:

120. Դասընթացում ներառված փորձառության հաշվետվությունը ներկայացվում է դրա համար սահմանված ձևաչափով (տպագիր, շնորհանդեսի ձևով և այլն)՝ անհատական աշխատանքի վերջնական տարբերակը վերբեռնելով moodle.asue.am հարթակ:

121. Դասախոսը գնահատում և ստորագրում է դասընթացում ներառված փորձառության հաշվետվությունը՝ գրավոր (հակիրճ) հիմնավորելով նշված գնահատականը:

122. Դասընթացում ներառված փորձառության հաշվետվությանը ներկայացված պահանջներից որևէ մեկին չբավարարելու դեպքում աշխատանքը չի գնահատվում և վերադարձվում է լրամշակման (բացառությամբ ակադեմիական անազնվության բացահայտված դեպքերի, որի պարագայում հաշվետվությունն առհասարակ գնահատման ենթակա չէ), որի համար ուսանողին հատկացվում է 5 օր:

123. Դասընթացում ներառված փորձառության հաշվետվության պաշտպանությունը պարտադիր է, իսկ չներկայացված կամ ներկայացված, բայց չպաշտպանած աշխատանքի գնահատականը հավասար է 0-ի:

124. Տվյալ դասընթացում ներառված փորձառության բաղադրիչի գնահատականը դասախոսի կողմից ամփոփաթերթում արձանագրվում է մինչև կիսամյակային դասընթացների վերջին շաբաթվա մեկնարկը:

125. Դասընթացում ներառված փորձառությունը գնահատվում է որպես մաս վերջնական հաշվարկային գնահատականի՝ 0-4 միավոր միջակայքում: Գնահատումն իրականացվում է 0,25 միավոր քայլով:

126. Դասընթացում ներառված փորձառության բաղադրիչի գնահատականի մասին ուսանողը տեղեկացվում է պաշտպանությունից անմիջապես հետո:

127. Դասընթացում ներառված փորձառության հաշվետվությունները հաշվառվում և պահպանվում են moodle.asue.am հարթակում՝ մինչև կիսամյակի միջին որակական գնահատականի (ՄՈԳ) հրապարակումը:

128. Քննաշրջանի ընթացքում իրականացվում են խորհրդատվություններ և գիտելիքների ամփոփիչ ստուգումներ:

129. Գիտելիքի ստուգման քննություններն իրականացվում են գրավոր, թեստային, բանավոր կամ «քեյս սթադի» (case study) եղանակներով:

*(129-**րդ կետը փոփ., խմբ.** 13.11.2024 N 3-3)*

130. Յուրաքանչյուր դասընթացի շրջանակներում գիտելիքի ստուգման եղանակներն առաջարկում է համապատասխան ամբիոնը, հաստատում են ֆակուլտետի գիտական խորհուրդը և ռեկտորատը:

131. Բանավոր քննություններն անցկացվում են տվյալ ամբիոնի առնվազն 2 դասախոսից բաղկացած հանձնաժողովներով:

132. Հանձնաժողովի կազմը հաստատվում և ներկայացվում է դեկանատ քննաշրջանի մեկնարկից մեկ շաբաթ առաջ:

133. Ամփոփիչ ստուգման ժամանակ դասախոսը ստուգում է ամբողջ կիսամյակի նյութի իմացությունը:

134. Բանավոր քննության դեպքում գնահատումն իրականացվում է 0-10 միավոր միջակայքում՝ 1,0 միավոր քայլով:

135. Գիտելիքը ստուգվում, գնահատվում և արդյունքները գրանցվում են ամփոփաթերթում՝ ստուգումն անցկացնելու օրը:

136. Ուսանողը պարտավոր է քննության ներկայանալ անձը հաստատող փաստաթղթով (ստուգման գրքույկ, համալսարանի նույնականացման քարտ):

137. Միևնույն դասընթացի շրջանակներում տարբեր ակադեմիական խմբերի ուսանողների գիտելիքը ստուգվում է նույն հարցաշարերով:

138. Գնահատման վերաբերյալ վեճերը և քննական կարգի տեխնիկական խախտումները լուծվում են ռեկտորատի որոշումներով:

139. Ուսանողն իրավունք ունի բողոքարկելու գրավոր քննության գնահատականը դրա անցկացումից, դրա մասին տեղեկացվելուց և արդյունքը քննարկելուց հետո՝ 5 օրվա ընթացքում:

140. Բողոքարկման դեպքում ուսանողը լրացնում և դեկանին է ներկայացնում սույն կարգի N 9 հավելվածում ներկայացված ձևանմուշով բողոքարկման թերթիկը:

141. Բողոքարկման թերթիկը և գրավոր աշխատանքը դեկանը ներկայացնում է ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին: Վերջինս դա ուղարկում է համապատասխան ամբիոն քննարկման համար:

142. Բողոքարկված գրավոր աշխատանքը անցնում է քննարկման հետևյալ փուլերը.

1) վերանայում և վերագնահատում ամբիոնում՝ ստեղծված հանձնաժողովի կողմից,

2) հանձնաժողովի գրավոր կարծիքի ներկայացում և հիմնավորում՝ ուսանողի և ամբիոնի վարիչի մասնակցությամբ (ամբիոնում):

143. Բողոքարկված գրավոր աշխատանքը ռեկտորատի որոշմամբ կարող է ուղարկվել վերագնահատման երկրորդ անգամ:

144. Քննարկման գործընթացն ամբիոնում իրականացվում է բողոքարկման թերթիկը ստանալու պահից՝ 2 օրվա ընթացքում:

145. Բողոքարկման արդյունքում գրանցված գնահատականը հաստատվում է բողոքարկման ամբիոնային հանձնաժողովի անդամների ստորագրությամբ:

146. Բանավոր քննության դեպքում ինչպես բողոքարկումը, այնպես էլ գնահատականի փոփոխությունը կատարվում են նույն օրը, գնահատականի հրապարակումից անմիջապես հետո, առանց լսարանից դուրս գալու՝ մինչև քննության ավարտը:

146.1. Երեկոյան մագիստրոսի կրթական ծրագրերի պարագայում բողոքարկումը և գնահատականի փոփոխությունը կատարվում են հաջորդ աշխատանքային օրը:

146.2. Երեկոյան մոդուլային սկզբունքով իրականացվող մագիստրոսի կրթական ծրագրերի պարագայում բողոքարկումը և գնահատականի փոփոխությունը կատարվում են ոչ ուշ, քան հաջորդ մոդուլի մեկնարկին նախորդող վերջին աշխատանքային օրը:

147. Բողոքարկման պարագայում դասախոսն ուսանողին տրամադրում է բողոքարկման թերթիկ (լրացնելու համար) և տեղյակ է պահում այդ մասին իր ամբիոնի վարիչին և տվյալ ֆակուլտետի դեկանին: Դասախոսը պարտավոր է քննության ժամանակ ունենալ սույն կարգի N 8 հավելվածում սահմանված ձևանմուշի բողոքարկման թերթիկներ:

147.1. Երեկոյան մագիստրոսի կրթական ծրագրերի պարագայում դասախոսը բողոքարկման վերաբերյալ տեղեկացնում է երեկոյան մագիստրոսի կրթական ծրագրերի համակարգողին:

148. Բանավոր քննության գնահատականի վերանայման ժամանակ ուսանողը պատասխանում է նույն քննական տոմսի հարցերին՝ հանձնաժողովի ներկայությամբ, որը նախագահում է տվյալ ֆակուլտետի դեկանը (կամ մագիստրոսի կրթական ծրագրերի համակարգողը), իսկ հանձնաժողովի անդամներ են տվյալ ամբիոնի ակադեմիական կազմից որևէ անդամ և ուսանողական ինքնակառավարման մարմնի ներկայացուցիչը:

148.1. Երեկոյան և մոդուլային մագիստրոսի կրթական ծրագրերի պարագայում հանձնաժողովը ձևավորվում է հետևյալ կազմով՝ երեկոյան մագիստրոսի կրթական ծրագրերի համակարգող, ֆակուլտետի դեկան և ամբիոնի ակադեմիական կազմի ներկայացուցիչ:

149. Բողոքարկման արդյունքի վերաբերյալ կազմվում է արձանագրություն գնահատականը նույնը թողնելու, գնահատականը բարձրացնելու կամ գնահատականը իջեցնելու վերաբերյալ, որը ստորագրում են ուսանողը և հանձնաժողովի անդամները:

150. Բողոքարկման արդյունքում փոփոխված գնահատականն արձանագրվում է ամփոփաթերթում՝ անհրաժեշտության դեպքում կատարելով համապատասխան ուղղում դեկանի կողմից:

151. Ուսանողի գիտելիքը ստուգվում է նաև կրթական ծրագրի փորձառության բաղադրիչում: Փորձառությունների կրեդիտային բեռնվածությունը և տևողությունը

սահմանվում է կրթական ծրագրով՝ պահպանելով փորձառություններին հատկացված կրեդիտների հանրագումարը:

1) Փորձառությունը կազմակերպվում է «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կրթական ծրագրերով հաստատված ուսանողների փորձառության կազմակերպման, անցկացման և ամփոփման կարգի» համաձայն:

2) Ըստ կարգի՝ յուրաքանչյուր ուսանողի համար փորձառության վայրում նշանակվում է ղեկավար, իսկ ամբիոնի գիտամանկավարժական կազմից նշանակվում է փորձառության ղեկավար կամ համակարգող: Փորձառության վայրի և ամբիոնից նշանակված ղեկավարների իրավասությունները և պարտականությունները սահմանվում են կարգով:

3) Նախքան փորձառության սկիզբը՝ յուրաքանչյուր ամբիոն, ելնելով իր մասնագիտության առանձնահատկություններից, կրթական ծրագրի բովանդակությունից և վերջնարդյունքներից, կազմում է ըստ ոլորտների փորձառության ծրագրեր (ըստ փորձառության վայրի տարբերակված վերջնարդյունքներով), որտեղ ներկայացված են փորձառության նպատակը, տևողությունը, ուսանողին հանձնարարվող առաջադրանքները (որոնք բխում են փորձառության վայրի վերջնարդյունքներից և որոնցով առաջնորդվում են ուսանողները), փորձառության հաշվետվությանը ներկայացվող պահանջները, հաշվետվության և փորձառության նկարագրի ներկայացման և պաշտպանության վերջնաժամկետները:

152. Փորձառության գնահատումն իրականացվում է 20 միավորային սանդղակով: Ամփոփ գնահատականը ձևավորվում է փորձառության ընթացքում ըստ գնահատման 2 գործոնների՝ «ամբիոնից նշանակված ղեկավարի գնահատական» և «հաշվետվության պաշտպանության գնահատական»: Փորձառության առանձին գործոններով կատարված գնահատումները ընդհանրացվում են սույն կարգի N 5 հավելվածում բերված կշիռներով:

153. Փորձառության գնահատականը գրանցվում է սույն կարգի N 3 հավելվածում սահմանված ձևանմուշով փորձառության ամփոփաթերթում:

154. Փորձառությունը համարվում է չհանձնած, եթե.

1) փորձառության ամփոփ գումարային գնահատականը փոքր է 8-ից,

2) փորձառության ծրագրով սահմանված ժամկետում ուսանողը չի ներկայացրել փորձառության հաշվետվությունը և նկարագիրը,

3) փորձառության ծրագրով սահմանված ժամկետում ուսանողը չի ներկայացել փորձառության հաշվետվության պաշտպանությանը,

4) ուսանողը չի հաճախել փորձառության սահմանված տևողության կեսից ավելին (ըստ շաբաթների):

155. Փորձառության պաշտպանությունը կազմակերպվում է մեկ անգամ, ամբիոնի նիստով հաստատված հանձնաժողովի կողմից, փորձառության ծրագրով սահմանված օրը:

156. Փորձառության բաղադրիչի գնահատման համար վերահանձնում չի կազմակերպվում և ուսանողը հեռացվում է համալսարանից և չի համարվում տեսական ուսուցումն ավարտած:

157. Ուսանողի գիտելիքը ստուգվում է նաև կրթական ծրագրի մագիստրոսական թեզի բաղադրիչում:

158. Մագիստրոսական թեզը նախապատրաստվում և հրապարակային պաշտպանության է ներկայացվում ամփոփիչ ատեստավորման նպատակով:

159. Ուսանողների ամփոփիչ ատեստավորման գործընթացը, ժամկետները, մագիստրոսական թեզերի ընտրության ընթացակարգերը և ժամկետները կարգավորվում են «Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կարգի» համաձայն:

1) Ուսանողը մագիստրոսական թեզի թեմայի ընտրությունը կատարում է «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում մագիստրոսական թեզի կատարման, պաշտպանության ներկայացման և հրապարակային

պաշտպանության կանոնակարգով» նախատեսված ձևով և սահմանված ժամկետներում:

2) Մագիստրոսական թեզը նախապատրաստելու և հրապարակային պաշտպանության ներկայացնելու նպատակով յուրաքանչյուր ուսանողի համար նշանակվում է ղեկավար:

3) Մագիստրոսական թեզը ուսանողի կողմից նախապատրաստվում և հրապարակային պաշտպանության է ներկայացվում «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում մագիստրոսական թեզի կատարման, պաշտպանության ներկայացման և հրապարակային պաշտպանության կանոնակարգով» նախատեսված պահանջներին և սահմանված ժամկետներին համապատասխան:

160. Մագիստրոսական թեզի հրապարակային պաշտպանությունը տեղի է ունենում ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովում: Ամփոփիչ ատեստավորման նպատակով հանձնաժողովի կազմավորումը, դրա գործունեությունը և ուսանողների գնահատումը կարգավորվում են «Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կարգով»:

161. Մագիստրոսական թեզի գնահատումն իրականացվում է 20 միավորային սանդղակով՝ սույն կարգի N 7 հավելվածում բերված գործոնների կշիռներով:

162. Մագիստրոսական թեզի գնահատականը գրանցվում է սահմանված ձևանմուշով՝ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի գրանցամատյանում:

163. Մագիստրոսական թեզը համարվում է չհանձնած, եթե.

1) ուսանողը սահմանված վերջնաժամկետում չի ներկայացրել մագիստրոսական թեզ,

2) ուսանողը չի ներկայացել մագիստրոսական թեզի հրապարակային պաշտպանությանը,

3) մագիստրոսական թեզի պաշտպանությունից ստացել է անբավարար գնահատական:

164. Մագիստրոսական թեզի պաշտպանությունը կազմակերպվում է մեկ անգամ:

165. Մագիստրոսական թեզը չպաշտպանելու դեպքում ուսանողին չի տրվում բարձրագույն կրթության կրթական ծրագիրն ավարտած լինելը հավաստող պետական նմուշի դիպլոմ և կրթական ծրագրով նախատեսված բարձրագույն կրթության համապատասխան որակավորում:

166. Հաջորդող ուսումնական տարիներին ուսանողը կարող է կրկին նախապատրաստել և հրապարակային պաշտպանության ներկայացնել ընտրված նոր թեմայով մագիստրոսական թեզ, ինչի ժամկետները և ընթացակարգերը սահմանվում են «Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կարգով»:

167. Մագիստրոսական թեզի նոր թեմա ստանալու համար ուսանողը դիմում է ներկայացնում ռեկտորի անունով ՄԿԾ-ով սահմանված ամփոփիչ ատեստավորումից առնվազն 2 կիսամյակ առաջ՝ կիսամյակը սկսելուց 15 օրվա ընթացքում:

7. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՎԵՐԱՀԱՆՁՆՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

168. Հարգելի պատճառով գիտելիքի ստուգմանը չներկայացած ուսանողի համար կազմակերպվում է մեկ կենտրոնացված լրացուցիչ ստուգում:

169. Ամփոփիչ ստուգմանը (քննությանը կամ ստուգարքին) չներկայանալը հարգելի կարող է համարվել, եթե.

1) ուսանողը կամ նրա ներկայացուցիչը մինչև գիտելիքի ստուգման կազմակերպման աշխատանքային օրվա ավարտը ուսանողի չներկայանալու վերաբերյալ ռեկտորի անունով դիմում է ներկայացրել ռեկտորի աշխատակազմ,

2) ռեկտորի աշխատակազմում նշում է կատարվել դիմումն ընդունելու օրվա վերաբերյալ,

3) տվյալ օրը կամ հետագայում դիմումին կցվել է քննությանը չներկայանալը հարգելի համարելու վերաբերյալ հիմնավորող փաստաթուղթ (ներկայացվում է համապատասխան ֆակուլտետի դեկանատ):

170. Գիտելիքի ստուգմանը (քննությանը կամ ստուգարքին) հարգելի պատճառով չներկայացած ուսանողների համար կազմակերպվում է մեկ վերահանձնում՝ նախքան 1-ին և 2-րդ վերահանձնումների փուլի մեկնարկը:

171. Գիտելիքի ստուգմանը (քննությանը կամ ստուգարքին) կամ 2 վերահանձնումներից որևէ մեկին չներկայացած ուսանողների համար 2-րդ վերահանձնումից հետո՝ նախքան առավելագույնը 12 կրեդիտ կազմող ակադեմիական պարտքերի 1-ին և 2-րդ վերահանձնումների փուլը, կազմակերպվում է մեկ լրացուցիչ վերահանձնում (անկախ նրանից ուսանողը բացակայել է միայն գիտելիքի ստուգմանը (քննությանը կամ ստուգարքին), վերահանձնումներից որևէ մեկին, թե՞ բոլորին):

172. Հարգելի պատճառով չներկայացած ուսանողների գիտելիքի ստուգումները կազմակերպվում են առանձին ուղեգրերով և դրական գնահատականի շեմը հաղթահարելու պարագայում ուսանողը չի համարվում տվյալ դասընթացից վերահանձնում ունեցող:

173. Չներկայացած ուսանողների գիտելիքի ստուգումները կազմակերպվում են ուղեգրերով, իսկ դրական գնահատականի շեմը հաղթահարելու պարագայում ուսանողը համարվում է տվյալ դասընթացից վերահանձնում ունեցող:

174. Եթե ուսանողի բացակայությունը տևական է ու հիմնավորված և այդ պատճառով նա չի հասցնում քննաշրջանի ավարտից հետո առաջին շաբաթվա ընթացքում ներկայացնել փաստաթղթերը, ապա նրա գիտելիքի ստուգման լրացուցիչ օր նշանակելու վերաբերյալ հարցը դեկանի ներկայացմամբ քննարկվում է ռեկտորատում:

175. Եթե ուսանողը բացակայում է նաև լրացուցիչ նշանակված օրը, ապա տվյալ ուսանողի համար նոր ստուգում չի կազմակերպվում կամ բացառիկ դեպքերում դա կարող է իրականացվել ռեկտորատի որոշմամբ:

176. Քննությամբ ավարտվող դասընթացներին չներկայացած ուսանողների վերահանձնումները գնահատվում են 0-10 միավորով:

177. Վերահանձնումների ժամանակ «գիտահետազոտական աշխատանք», «փորձառության բաղադրիչ», «ընթացիկ ակտիվություն և հաճախումներ» գործոններով ուսանողի ստացած գնահատականները պահպանվում են և դրական գնահատական ստանալու համար անհրաժեշտ է ամփոփիչ վերահանձնման համար սահմանված 10 միավորից հավաքել սահմանված անցողիկ շեմի պակասող միավորը (վերահանձնման, «գիտահետազոտական աշխատանք», «փորձառության բաղադրիչ», «ընթացիկ ակտիվություն և հաճախումներ» գործոնների հանրագումարում նվազագույնը 8 միավոր՝ առանց կլորացման):

178. Վերահանձնումը կազմակերպվում է ուսանողի վերջնական հաշվարկային գնահատականի հիման վրա, այն դեպքում, երբ ուսանողի վերջնական հաշվարկային գնահատականը հավասար է «D»-ի:

179. Չի սահմանափակվում այն առարկաների քանակը, որոնցից ուսանողը կարող է մասնակցել վերահանձնման:

180. Տվյալ դասընթացից վերահանձնման մասնակցած ուսանողների համար վերջնական հաշվարկային գնահատականը ձևավորվում է «գիտահետազոտական աշխատանք», «փորձառության բաղադրիչ» (եթե այդպիսիք նախատեսված են դասընթացի ծրագրով), «ընթացիկ ակտիվություն և հաճախումներ» գործոններով՝ գնահատականի և վերահանձնման գնահատականի հանրագումարով:

181. Դիպլոմի հավելված փոխանցվում է վերահանձնումից հետո ձևավորված վերջնական գնահատականը:

182. Կիսամյակի արդյունքներն ամփոփելուց հետո, նախքան վերահանձնումը, դեկանատը ձևավորում է վերահանձնման թույլատրված ուսանողների ցանկը՝ այն հասանելի դարձնելով ուսանողներին և ամբիոններին:

183. Վերահանձնմանը մասնակցող ուսանողը, հաստատված ժամանակացույցին համապատասխան, կարող է երկրորդ անգամ վերահանձնել տվյալ դասընթացը, եթե առաջին անգամ չի հաղթահարել դրական գնահատականի շեմը: Այս դեպքում առաջին վերահանձնման արդյունքը չի գումարվում հաշվարկված գնահատականին:

184. Չի սահմանափակվում այն առարկաների քանակը, որոնցից ուսանողը կարող է մասնակցել ոչ հարգելի պատճառով չներկայացած ուսանողների համար նախատեսված վերահանձնումներին:

185. Տվյալ դասընթացից վերահանձնման մասնակցած ուսանողների համար վերջնական հաշվարկային գնահատականը ձևավորվում է «գիտահետազոտական աշխատանք», «փորձառության բաղադրիչ» (եթե այդպիսիք նախատեսված են դասընթացի ծրագրով), «ընթացիկ ակտիվություն և հաճախումներ» գործոններով՝ գնահատականի և վերահանձնման գնահատականի հանրագումարով:

186. Առավելագույնը 12 կրեդիտ կազմող ակադեմիական պարտքեր ունեցող ուսանողների 1-ին և 2-րդ վերահանձնումները կազմակերպվում են յուրաքանչյուր կիսամյակի սկզբում (ոչ ուշ, քան 6-րդ շաբաթը)՝ ըստ հաստատված ժամանակացույցների և քննագրաֆիկների:

187. Առավելագույնը 12 կրեդիտ կազմող ակադեմիական պարտքեր ունեցող ուսանողների 1-ին և 2-րդ վերահանձնումների ժամանակ «գիտահետազոտական աշխատանք», «փորձառության բաղադրիչ» «ընթացիկ ակտիվություն և հաճախումներ» գործոններով ուսանողի ստացած գնահատականները չեն պահպանվում և դրական գնահատական ստանալու համար անհրաժեշտ է հավաքել սահմանված 20 միավորի 40%-ը:

188. Առավելագույնը 12 կրեդիտ կազմող ակադեմիական պարտքեր ունեցող ուսանողների 1-ին և 2-րդ վերահանձնումների ժամանակացույցները, վերջնաժամկետները և գործընթացը կարգավորվում են համալսարանում գործող կարգին համապատասխան:

189. Այն դասընթացները, որոնք հաջորդ կիսամյակում ունեն շարունակություն, ապա դրանց առավելագույնը 12 կրեդիտ կազմող ակադեմիական պարտքերի 1-ին և 2-րդ վերահանձնումները պետք է կազմակերպվեն տվյալ կիսամյակում:

190. Վերահանձնում ունեցող ուսանողները, անկախ ՄՈԳ-ից, չեն կարող օգտվել ուսումնառության անվճար համակարգի մրցույթին մասնակցելու իրավունքից, ինչպես նաև բուհի կողմից տրամադրվող ուսման վարձի զեղչերից:

191. Ուսումնառության ընթացքում ստացած դրական գնահատականները վերահանձնման ենթակա չեն:

8. ԴԱՍԸՆԹԱՑԻ (ԿՐԹԱԿԱՆ ՄՈԴՈՒԼԻ) ՎԵՐՋՆԱԿԱՆ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

192. Քննաշրջանից հետո (նախքան վերահանձնումները) յուրաքանչյուր ուսանողի համար դեկանատում հաշվարկվում է տվյալ դասընթացի վերջնական գնահատականը՝ գործոնների գնահատականների և կշիռների հիման վրա: Հաշվարկը կատարվում է կշռված միջինի սկզբունքով՝ հետևյալ բանաձևով.

M=G1 X (K1/100) + G2 X (K2/100) + _____ + GnX (Kn/100),

որտեղ՝

M-ը վերջնական հաշվարկային գնահատականն է,

G1___Gn-ը 1-ից n-րդ գործոնների գնահատականներն են,

K1___Kn-ը 1-ից n-րդ գործոնների կշիռներն են:

193. Քննությամբ ավարտվող դասընթացների համար հաշվարկային գնահատականը նույնացվում է գնահատականի տառային նիշով՝ կիրառելով համապատասխան աղյուսակները (հավելված N 4):

194. Տարբերակված գնահատականներով գնահատվող դասընթացների համար վերջնական հաշվարկային գնահատականի նիշերն են՝ A+, A, A-, B+, B, B-, C+, C, C-, D:

195. Ամփոփաթերթում գնահատականի բաղկացուցիչները դասախոսի կողմից նշվում են համապատասխան մասնաբաժիններով: Ամփոփաթերթում վերջնական հաշվարկային գնահատականը ձևավորվում է գործոնի բաղկացուցիչների պարզ գումարի հիման վրա: Գործոնի բաղկացուցչի մեծությունը բնորոշվում է գործոնի կշռով (հավելվածներ N N 1, 2, 3, 5):

9. ԿՐԵԴԻՏ ՉՍՏԱՆԱԼՈՒ ՊԱՐԱԳԱՅՈՒՄ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՑ ՀԵՌԱՑՎԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

196. Ուսանողը չի ստանում կրթական ծրագրի որևէ բաղադրիչի համար նախատեսված կրեդիտը և հեռացվում է համալսարանից, եթե.

1) երկու վերահանձնումների արդյունքներով չի հաղթահարել որևէ դասընթացի դրական գնահատականի համար սույն կարգով սահմանված շեմերը,

2) սահմանված կարգով չի հանձնել փորձառությունը,

3) սահմանված կարգով չի գրել և չի պաշտպանել մագիստրոսական թեզը:

197. Կիսամյակի արդյունքներով ուսանողը համալսարանից հեռացվում է, եթե մեկ և ավելի առարկաներից ուսանողի ակադեմիական պարտքը գերազանցում է 12 կրեդիտը:

198. Փորձառությունից կրեդիտ չվաստակելու դեպքում ուսանողը հեռացվում է համալսարանից:

10. ԴԵԿԱՆԱՏ-ԱՄԲԻՈՆ-ՈՒՍԱՆՈՂ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՇԱՐԺԸ

199. Դեկանատը՝

1) իրականացնում է ուսանողների հաճախումների ընթացիկ հաշվառման վերահսկողությունը,

2) քննարկում, հաստատում կամ մերժում է ուսանողների բացակայությունները հարգելի համարելու դիմումները, հարգելի համարված բացակաների համար կատարում է համապատասխան նշումներ ums.asue.am համակարգի էլեկտրոնային մատյաններում,

3) հաշվառում է ուսանողների ընդհանուր բացակայությունները, որի հետ կապված պարբերաբար հաշվետվություն է ներկայացնում ռեկտորատ,

4) ռեկտորատի հաստատմանն է ներկայացնում քննաշրջանի ժամանակացույցը,

5) ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի հաստատմանն է ներկայացնում քննագրաֆիկները, վերահանձնումների քննագրաֆիկները (ներառյալ՝ քննական հանձնաժողովների կազմը),

6) ռեկտորին է ներկայացնում քննություններին հարգելի պատճառով չներկայացած, վերականգնված և այլ բուհերից տեղափոխված այն ուսանողների վերաբերյալ տեղեկատվությունը, որոնց համար կազմակերպվում է գիտելիքի ստուգման և գնահատականների փոխանցման գործընթաց՝ ըստ սահմանված ժամանակացույցի,

7) նախապատրաստում է ամփոփաթերթերը (հավելվածներ N N 1, 2, 3, 4)՝ նախապես լրացնելով 1-ին, 2-րդ և 3-րդ սյունակները,

8) ամփոփիչ ստուգումներից հետո նախապատրաստում է ամփոփաթերթերը (հավելվածներ N N 1, 2, 3, 4), հաշվարկում է ամփոփիչ գնահատականը՝ լրացնելով ձևաթերթերի համապատասխան սյունակները՝ այդ տվյալները հասանելի դարձնելով ուսանողներին,

9) ռեկտորատ է ներկայացնում այն ուսանողների ցանկը, որոնք համակարգչային քննություններից ստացել են «D» կամ «U» գնահատական և թույլատրվել են վերահանձնումների,

10) նախապատրաստում է հարգելի պատճառով չներկայացած, չներկայացած, առավելագույնը 12 կրեդիտ կազմող ակադեմիական պարտքերի 1-ին և 2-րդ վերահանձնումներին մասնակցող ուսանողների ուղեգրերը,

11) հաստատված կանոնակարգով համապատասխան կրեդիտներ չվաստակած ուսանողներին ներկայացնում է հեռացման՝ նախապես հրապարակելով նրանց անունները,

12) կազմակերպում է ընտրովի դասընթացների և ավարտական աշխատանքների թեմաների ընտրության գործընթացը:

200. Ամբիոնը՝

1) կազմում, քննարկում, հաստատում և moodle.asue.am հարթակով ուսանողներին է տրամադրում դասընթացի ծրագիրը և քննական հարցաշարը,

2) կազմում է կրեդիտային հենքով ուսումնական պլաններ՝ համաձայն հաստատված նորմատիվների,

3) կազմում, քննարկում, հաստատում և ֆակուլտետի գիտական խորհրդի հաստատմանն է ներկայացնում անհատական աշխատանքների թեմաների ցանկը և moodle.asue.am համակարգով ուսանողների ընտրությանը ներկայացվելիք ավարտական աշխատանքների ցանկը,

4) կազմում, քննարկում, հաստատում և ֆակուլտետի գիտական խորհրդի հաստատմանն է ներկայացնում փորձառության ծրագրերը, նշանակում ուսանողի փորձառության ղեկավար ամբիոնի ակադեմիական կազմից և հետևում փորձառության ընթացքին,

5) վարում է փորձառության ղեկավարների հանդիպումներին ուսանողների հաճախումներն արտացոլող մատյան, փորձառության նկարագիրն ու հաշվետվությունը հանձնելու համապատասխան մատյաններ, որոնք ամբիոնի վարիչը սահմանված կարգով ստորագրությամբ մարում և դեկանատ է ներկայացնում փորձառության հաշվետվության ներկայացման վերջնաժամկետ սահմանված աշխատանքային օրվա ավարտին,

6) անհատական աշխատանք պարունակող դասընթացների համար նախապատրաստում է անհատական կամ թիմային աշխատանքների թեմատիկա,

7) կազմում, քննարկում, հաստատում և դեկանատին է փոխանցում բանավոր ստուգմամբ ավարտվող դասընթացների քննական հանձնաժողովների

(ներառյալ՝ վերահանձնումները) կազմը՝ ոչ ուշ, քան քննաշրջանը սկսվելուց մեկ ամիս առաջ,

8) կազմում է ընտրովի դասընթացների համառոտագրերը և համապատասխան ժամկետներում դրանք moodle.asue.am համակարգ վերբեռնելով ներկայացնում ուսանողներին,

9) ուսումնական պլաններում պարբերաբար թարմացնում է ընտրովի դասընթացների ցանկը,

10) կազմակերպում է ուսանողների արտալսարանային աշխատանքը՝ սահմանելով դասախոսների հերթապահություն,

11) ուսանողին moodle.asue.am համակարգով տրամադրում է համապատասխան մեթոդական նյութեր, հավելյալ գրականության ցանկ դասընթացը յուրացնելու համար,

12) կազմակերպում է անհատական խորհրդատվություններ:

11. ՈՒՍԱՆՈՂԻ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

201. Ուսանողի ակադեմիական առաջադիմության ընդհանրացված արդյունքները ներկայացվում են նրա ակադեմիական տեղեկագրում (հավելված N 6): Ակադեմիական տեղեկագիրը կարող է կազմվել ինչպես առանձին կիսամյակի կամ ուսումնական տարվա համար, այնպես էլ լինել ամփոփիչ: Ակադեմիական տեղեկագիրը պարունակում է միջազգայնորեն ընդունված հետևյալ 4 քանակական ցուցանիշները՝ գումարային կրեդիտներ, գնահատված կրեդիտներ, վարկանիշային միավորներ և միջին որակական գնահատական (ՄՈԳ) F[1]F:

1) Գումարային կրեդիտը բոլոր դասընթացների և ուսումնական մոդուլների կրեդիտների գումարն է: Գումարային կրեդիտը ներառում է տվյալ կրթական ծրագրի համար նախատեսված բոլոր այն ուսումնական մոդուլները, որոնք

[1] Ներկայացված ցուցանիշները նկարագրված են նաև նախարարության կողմից հաստատված օրինակելի կարգում:

գնահատված են A+ -ից մինչև C-: Գումարային կրեդիտները հաշվելիս բացառվում են այն դասընթացները կամ մոդուլները, որոնցից ուսանողը գնահատվել է անբավարար (D):

2) Գնահատված կրեդիտը (պարզ գումարով արտահայտված) տվյալ կրթական ծրագրի բոլոր այն դասընթացների կամ ուսումնական մոդուլների կրեդիտներն են, որոնք գնահատվում են տարբերակված գնահատականներով (գնահատվում են միայն A+, A, A-, B+, B, B- կամ C+, C, C-), այսինքն՝ այս ցուցանիշը պարունակում է գումարային կրեդիտների մի մասը:

3) Ակադեմիական տեղեկագրում տառային գնահատականները նույնացվում են համարժեք թվային միավորներով՝ գնահատականների աղյուսակի հիման վրա (հավելված N 4): Որևէ դասընթացի (կամ կրթական մոդուլի) վարկանիշային միավորը որոշվում է տվյալ դասընթացի համար սահմանված կրեդիտների և ուսանողի ստացած գնահատականի արտադրյալով (օրինակ՝ եթե 4 կրեդիտանոց դասընթացը գնահատվել է B (77), ապա տվյալ դասընթացի ՎՄ-ը հավասար է 4 կրեդիտ X 77, այսինքն՝ 308 վարկանիշային միավոր 400 հնարավորից): Վարկանիշային միավորը բոլոր գնահատված կրեդիտների և դրանց համապատասխանող գնահատականների արտադրյալների գումարն է:

Այն հաշվարկվում է հետևյալ կերպ.

$$\text{վարկանիշային միավորը} = \sum_{i=1}^{k} (\mathbf{C}_i \times X_i),$$

որտեղ՝

X_i-ն i ուսումնական մոդուլի գնահատականի թվային արժեքն է,

C_i-ն՝ i ուսումնական մոդուլի կրեդիտը,

իսկ k-ն՝ ուսումնական մոդուլների քանակը:

4) Միջին որակական գնահատականը (ՄՈԳ) ընդհանրացված ցուցանիշ է, որը ներկայացնում է ուսանողի ընդհանուր առաջադիմությունը: Այս ցուցանիշը հնարավորություն է տալիս ըստ առաջադիմության տարբերակելու նույն քանակի կրեդիտներ վաստակած ուսանողներին:

5) ՄՈԳ-ը արտացոլում է տվյալ կրթական ծրագրի բոլոր այն դասընթացների կամ ուսումնական մոդուլների կրեդիտները, որոնք ավարտվում են քննությամբ և գնահատվում են A, B կամ C տառային գնահատականներով:

202. ՄՈԳ-ը հաշվարկվում է վարկանիշային միավորների և գնահատված կրեդիտների հարաբերությամբ.

$$ՄՈԳ = \frac{Վարկանիշային\ միավոր}{Գնահատված\ կրեդիտներ}$$

1) Հաշվարկի արդյունքները ներկայացվում են մինչև 0,01-ի ճշտությամբ: Տարբերակվում են կիսամյակային (հաշվարկվում է առանձին կիսամյակի համար), տարեկան և ամփոփիչ (հաշվարկվում է մինչև ուսման տվյալ ժամանակահատվածը) ՄՈԳ-եր: Փոխատեղումն իրականացվում է տվյալ ուսումնական տարվա կտրվածքով՝ տարեկան ՄՈԳ-ի հաշվարկի հիման վրա:

2) Համալսարանում ՄՈԳ-ի նվազագույն սահմանը 8,0 է, որը պահանջվում է բավարար առաջադիմություն գրանցելու համար:

3) Համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ ՄՈԳ-ի շեմը կարող է բարձրացվել:

Հավելված N 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ
ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
ՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՎԱՐՏՎՈՂ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ N _____

20 _____ - 20 _____ ուսումնական տարվա _____ կիսամյակ
Ֆակուլտետը _____
Մասնագիտության (կրթական ծրագրի) ծածկագիրը և անվանումը _____ կուրսը _____
Առարկան _____ ընդամենը լսարանային ժամեր _____ , կրեդիտը _____
Դասախոսի ազգանունը, անունը, հայրանունը _____
Անցկացման ժամկետները Ամփոփիչ քննություն _____ 1-ին վերահանձնում _____ 2-րդ վերահանձնում _____

N	Ազգանուն, անուն, հայրանուն	ստուգման գրքույկի համարը	**գիտահետազոտական աշխատանքի գնահատականը** (0-4)	**ընթացիկ ակտիվությունը** (0-6)	**ամփոփիչ քննության արդյունքը** (0-10)	Վերջնական գնահատական			Վերահանձնում					
						թվային արժեքը (այդն 4+5+6)	տառային նիշը	դասախոսի ստորագրությունը	1-ին վերահանձնում (0-10)	1-ին վերահանձնումից հետո հաշվարկված գնահատականը (4+5+10)	դասախոսի ստորագրությունը	2-րդ վերահանձնում (0-10)	2-րդ վերահանձնումից հետո հաշվարկված գնահատականը (4+5+10)	դասախոսի ստորագրությունը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1.														
2.														
3.														
4.														
5.														
	Դասախոսի ստորագրություն													

Դեկան՝ _____ _____
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

Հավելված N 1.1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ
ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
ՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՎԱՐՏՎՈՂ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ N _____

20 _____ - 20 _____ ուսումնական տարվա _____ կիսամյակ
Ֆակուլտետը _____
Մասնագիտության (կրթական ծրագրի) ծածկագիրը և անվանումը _____ կուրսը _____
Առարկան _____ ընդամենը լսարանային ժամեր _____ , կրեդիտը _____
Դասախոսի ազգանունը, անունը, հայրանունը _____
Անցկացման ժամկետները Ամփոփիչ քննություն _____ 1-ին վերահանձնում _____ 2-րդ վերահանձնում _____

N	Ազգանուն, անուն, հայրանուն	ստուգման գրքույկի համարը	**փորձառության բաղադրիչի գնահատականը** (0-4)	**ընթացիկ ակտիվությունը** (0-6)	**ամփոփիչ քննության արդյունքը** (0-10)	Վերջնական գնահատական			Վերահանձնում					
						թվային արժեքը (այն 4+5+6)	տառային նիշը	դասախոսի ստորագրությունը	1-ին վերահանձնում (0-10)	1-ին վերահանձնումից հետո հաշվարկված գնահատականը (4+5+10)	դասախոսի ստորագրությունը	2-րդ վերահանձնում (0-10)	2-րդ վերահանձնումից հետո հաշվարկված գնահատականը (4+5+10)	դասախոսի ստորագրությունը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1.														
2.														
3.														
4.														
5.														
	Դասախոսի ստորագրություն													

Դեկան՝ _____ _____
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

Հավելված N 1.2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ
ՍՏՈՒԳԱՐՔՈՎ ԱՎԱՐՏՎՈՂ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ N _____

20 _____ - 20 _____ ուսումնական տարվա _____ կիսամյակ
Ֆակուլտետը _____
Մասնագիտության (կրթական ծրագրի) ծածկագիրը և անվանումը _____ կուրսը _____
Առարկան _____ ընդամենը լսարանային ժամեր _____ , կրեդիտը _____
Դասախոսի ազգանունը, անունը, հայրանունը _____
Անցկացման ժամկետները Ամփոփիչ քննություն _____ 1-ին վերահանձնում _____ 2-րդ վերահանձնում _____

N	Ազգանուն, անուն, հայրանուն	ստուգման գրքույկի համարը	**ընթացիկ ակտիվության** (0-12)	**ամփոփիչ ստուգման դասընթացի** (0-8)	Վերջնական գնահատական			Վերահանձնում					
					թվային արժեքը (կետն 4+5)	տառային նիշը	դասախոսի ստորագրությունը	1-ին վերահանձնում (0-10)	1-ին վերահանձնումից հետո հաշվարկված գնահատականը (4+9)	դասախոսի ստորագրությունը	2-րդ վերահանձնում (0-10)	2-րդ վերահանձնումից հետո հաշվարկված գնահատականը (4+12)	դասախոսի ստորագրությունը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
1.													
2.													
3.													
Դասախոսի ստորագրություն													

Դեկան՝ _____ _____
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

Հավելված N 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ
ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
ՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՎԱՐՏՎՈՂ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԿԱՄ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆ
ՉՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ N _____

20 _____ - 20 _____ ուսումնական տարվա _____ կիսամյակ
Ֆակուլտետը _____
Մասնագիտության (կրթական ծրագրի) ծածկագիրը և անվանումը _____ կուրսը _____
Առարկան _____ ընդամենը լսարանային ժամեր _____ , կրեդիտը _____
Դասախոսի ազգանունը, անունը, հայրանունը _____
Անցկացման ժամկետները Ամփոփիչ քննություն _____ 1-ին վերահանձնում _____ 2-րդ վերահանձնում _____

N	Ազգանուն, անուն, հայրանուն	ստուգման գրքույկի համարը	**ընթացիկ ակտիվությունը** (0-10)	**ամփոփիչ քննության արդյունքը** (0-10)	Վերջնական գնահատական			Վերահանձնում					
					թվային արժեքը (այն 4+5)	տառային նիշը	դասախոսի ստորագրությունը	1-ին վերահանձնում (0-10)	1-ին վերահանձնումից հետո հաշվարկված գնահատականը (4+9)	դասախոսի ստորագրությունը	2-րդ վերահանձնում (0-10)	2-րդ վերահանձնումից հետո հաշվարկված գնահատականը (4+12)	դասախոսի ստորագրությունը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
1.													
2.													
3.													
	Դասախոսի ստորագրություն												

Դեկան՝ _____ _____
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

Հավելված N 2.1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ
ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
ՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՎԱՐՏՎՈՂ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԿԱՄ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆ ՉՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԵՎ
ՈՒՍԱՆՈՂԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՄԲ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՄԲ ՓՈԽԱՐԻՆՎԱԾ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ N _____

20 _____ - 20 _____ ուսումնական տարվա _____ կիսամյակ

Ֆակուլտետը _____
Մասնագիտության (կրթական ծրագրի) ծածկագիրը և անվանումը _____ կուրսը _____
Առարկան _____ ընդամենը լսարանային ժամեր _____ , կրեդիտը _____
Դասախոսի ազգանունը, անունը, հայրանունը _____
Անցկացման ժամկետները Ամփոփիչ քննություն _____ 1-ին վերահանձնում _____ 2-րդ վերահանձնում _____

N	Ազգանուն, անուն, հայրանուն	ստուգման գրքույկի համարը	**հետազոտական աշխատանքի պաշտպանության արդյունքը** (0-20)	Վերջնական գնահատական		Վերահանձնում					
				տառային նիշը	դասախոսի ստորագրությունը	1-ին վերահանձնում (0-10)	1-ին վերահանձնումից հետո հաշվարկված գնահատականը (4+9)	դասախոսի ստորագրությունը	2-րդ վերահանձնում (0-10)	2-րդ վերահանձնումից հետո հաշվարկված գնահատականը (4+12)	դասախոսի ստորագրությունը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1.											
2.											
3.											
Դասախոսի ստորագրություն											

Դեկան՝ _____ _____
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

Հավելված N 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ

ՓՈՐՁԱՌՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

20 _____ - 20 _____ ուսումնական տարվա _____ կիսամյակ

Ֆակուլտետը _____

Մասնագիտության (կրթական ծրագրի) ծածկագիրը և անվանումը _____ կուրսը _____

Անցկացման ժամկետները Փորձառության սկիզբ _____ Փորձառության ավարտ _____

N	Ազգանուն, անուն, հայրանուն	Ստուգման գրքույկի համարը	Հաճախումների % -ը	Ամբիոնի ղեկավարի գնահատականը (0-4)	Հաշվետվության պաշտպանությունը (0-16)	Վերջնական գնահատական		Ամբիոնի ղեկավարի ստորագրությունը
						Թվային արժեքը (այուն 5+6)	Տառային նիշը	
1	2	3	4	5	6	7	8	9

Դեկան՝ _____ _____

(ստորագրություն) (անուն, ազգանուն)

Հավելված N 4

ՏԱՐԲԵՐԱԿՎԱԾ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ

ԱՎԱՆԴԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ	**ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ** 100 **ՄԻԱՎՈՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**	**ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ** 20 **ՄԻԱՎՈՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**	**ԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ ՏԱՌԱՅԻՆ ՆԻՇԸ**
Գերազանց	96-100	19,01-20	A+
Գերազանց	91-95	18,01-19,0	A
Գերազանց	86-90	17,01-18,0	A-
Լավ	81-85	16,01-17,0	B+
Լավ	76-80	15,01-16,0	B
Լավ	71-75	14,01-15,0	B-
Բավարար	66-70	13,01-14,0	C+
Բավարար	61-65	12,01-13,0	C
Բավարար	40-60	8,0-12,0	C-
Անբավարար	փոքր է 40-ից (առանց կլորացման)	փոքր է 8-ից (առանց կլորացման)	D

Հավելված N 5

ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅՈՒՄ ԲԱԶՄԱԳՈՐԾՈՆԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԿՇԻՌՆԵՐԸ

N	**ԳՈՐԾՈՆ** **քննությամբ ավարտվող գիտահետազոտական աշխատանք պարունակող դասընթացների համար**	**ԳՆԱՀԱՏԱԿԱՆ**
1.	հաճախումներ-ընթացիկ ակտիվություն	0-6
2.	ուսանողի գիտահետազոտական աշխատանք	0-4
3.	ամփոփիչ քննություն	0-10

N	**ԳՈՐԾՈՆ** **քննությամբ ավարտվող փորձառություն պարունակող դասընթացների համար**	**ԳՆԱՀԱՏԱԿԱՆ**
1.	հաճախումներ-ընթացիկ ակտիվություն	0-6
2.	ուսանողի փորձառություն	0-4
3.	ամփոփիչ քննություն	0-10

N	**ԳՈՐԾՈՆ** **քննությամբ ավարտվող գիտահետազոտական աշխատանք կամ փորձառություն չպարունակող դասընթացների համար**	**ԳՆԱՀԱՏԱԿԱՆ**
1.	հաճախումներ-ընթացիկ ակտիվություն	0-10
2.	ամփոփիչ քննություն	0-10

N	**ԳՈՐԾՈՆ** **քննությամբ ավարտվող գիտահետազոտական աշխատանք կամ փորձառություն չպարունակող դասընթացների համար, որոնք ուսանողի ընտրությամբ փոխարինվել են հետազոտական աշխատանքով**	**ԳՆԱՀԱՏԱԿԱՆ**
1.	հետազոտական աշխատանքի պաշտպանության արդյունքը	0-20

N	**ԳՈՐԾՈՆ** **ստուգարքով ավարտվող դասընթացների համար**	**ԳՆԱՀԱՏԱԿԱՆ**
1.	հաճախումներ-ընթացիկ ակտիվություն	0-12
2.	ստուգարք	0-8

N	**ԳՈՐԾՈՆ** **փորձառության գնահատման**	**ԳՆԱՀԱՏԱԿԱՆ**
1.	ամբիոնի ղեկավարի գնահատական	0-4
2.	փորձառության հաշվետվության պաշտպանություն	0-16

Հավելված N 5.1

ԸՆԹԱՑԻԿ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Հաճախումների ցուցանիշը	**Ընթացիկ ակտիվության առավելագույն գնահատականը**	
	Որպես մաս ընդհանուր հաշվարկային գնահատականի՝ քննությամբ ավարտվող, գիտահետազոտական աշխատանք կամ փորձառություն պարունակող դասընթացների համար	**Որպես մաս ընդհանուր հաշվարկային գնահատականի՝ քննությամբ ավարտվող, գիտահետազոտական աշխատանք կամ փորձառություն չպարունակող դասընթացների համար**
80,1-100,0	6	10
60,1-80,0	4	8
40,1-60,0	2	4
Մինչև 40,0	0	0

Հավելված N 6

ՈՒՍԱՆՈՂԻ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳՐԻ ՆՄՈՒՇ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Տրման ամսաթիվ _____

Մասնագիտությունը (կրթական ծրագիրը)					**Որակավորման աստիճանը**
«_____»					
Երկրորդ կիսամյակ, 20 _____					
N	**Դասընթացի անվանումը**	**Ժամերի ընդհանուր քանակը**	**Կրեդիտը**	**Գնահատականը** 20 **միավորային համակարգում**	**Գնահատականի տառային նիշը**
1.					
2.					
3.					
4.					
5.					
6.					
7.					
8.					
9.					
10.					
11.					
12.					
13.					
14,					
15.					

Գումարային կրեդիտը	**Գնահատված կրեդիտը**	**Վարկանիշային միավորը**	**ՄՈԳ**
Երկրորդ կիսամյակից հետո կուտակված արդյունքները, 20 _____			
Գումարային կրեդիտը	**Գնահատված կրեդիտը**	**Վարկանիշային միավորը**	**ՄՈԳ**

Դեկան՝ _____ _____

(ստորագրություն) (անուն, ազգանուն)

Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր՝ _____ _____

(ստորագրություն) (անուն, ազգանուն)

Անվավեր է առանց համալսարանի կնիքի

Հավելված N 7

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի

«_____» մասնագիտության

«_____» կրթական ծրագրի մագիստրատուրայի առկա

ուսուցման համակարգի 2-**րդ կուրսի մագիստրոսական թեզերի**

պաշտպանության ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի

գնահատման թերթիկ

N	**Ուսանողի ազգանունը, անունը, հայրանունը**	**Մագիստրոսական թեզի թեմայի վերնագիրը**	**Գնահատման գործոնների կշիռը* (միավոր)**			
			I	II	III	IV

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահ՝

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի անդամ՝

* Ծանոթություն:

I. մագիստրոսական թեզի բովանդակությունը, 15 %

II. մագիստրոսական թեզի ինքնուրույնության աստիճանը, 15 %

III. մագիստրոսական թեզի ներկայացման որակը, 35 %

IV. տրված հարցերի և դիտողությունների պատասխանների ամբողջականությունը և խորությունը, 35 %

Հավելված N 8

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԹԵՐԹԻԿԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳՐԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ԲԱՆԱՎՈՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Ֆակուլտետը _____

Մասնագիտությունը (կրթական ծրագիրը)

_____

Կուրսը _____

Խումբը _____

Ուսանողը _____

Առարկան _____

Գնահատող դասախոսը _____

Գնահատականը (տառերով և թվերով)

_____

Բացատրությունը բողոքի վերաբերյալ _____

_____

_____

_____

_____

Բողոքարկման ամսաթիվը _____

Ուսանողի ստորագրություն _____

Ամսաթիվ _____